<u>ՏԵՂԵԿԱՆՔ</u>

<u>(«Հեռուստեսության և ռադիոյի մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների հոդվածներում առաջարկվող լրացումների վերաբերյալ)</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2000 թվականի հոկտեմբերի 9-ին

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՄԱՍԻՆ
(օրենքը խմբ. 10.06.10 ՀՕ-100-Ն)

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

հեռուստառադիոհեռարձակում՝ էլեկտրամագնիսական ալիքների միջոցով պատկերների և (կամ) հնչյունների կամ դրանց պայմանանշանների այնպիսի տարածում հաղորդագծով (ներառյալ՝ կաբելային (մալուխային) կապով) կամ առանց հաղորդագծի (ներառյալ՝ ռադիոյով, հեռուստատեսությամբ կամ արբանյակային կապով եթեր հեռարձակումը), որ այդ պատկերները կամ հնչյունները հասանելի լինեն հասարակությանը.

հեռուստառադիոհաղորդում՝ հեռուստատեսությամբ կամ ռադիոյով տարածվող պատկերներ և (կամ) հնչյուններ և (կամ) այլ տեղեկատվություն պարունակող կենդանի կատարման կամ ամրագրված սահմանափակ տևողությամբ նյութ, որը բովանդակության և կազմակերպչական իմաստով ինքնուրույն և ավարտուն է, համարվում է հեղինակային և (կամ) հարակից իրավունքի օբյեկտ.

հեռուստառադիոծրագիր՝ հեռարձակման համար նախատեսված, հեռուստառադիոընկերության կողմից նախապես կարգավորված հաջորդականությամբ հեռուստառադիոհաղորդումների, գովազդի և այլ նյութերի ամբողջություն.

հեռուստառադիոհեռարձակման լիցենզիա՝ գրավոր թույլտվություն, որն իրավունք է տալիս իրականացնելու հեռուստառադիոծրագրերի հեռարձակում (վերահեռարձակում).

հեռուստառադիոընկերություն (հեռուստաընկերություն և (կամ) ռադիոընկերություն)՝ իրավաբանական անձ, որը հեռարձակում կամ վերահեռարձակում է հեռուստառադիոծրագրեր և պատասխանատվություն է կրում սույն օրենքի և իրավական այլ ակտերի կատարման համար.

լիցենզավորված անձ՝ սույն օրենքի համաձայն՝ հեռուստառադիոհեռարձակման (վերահեռարձակման) լիցենզիա ստացած անձ.

հայրենական արտադրության հեռուստառադիոհաղորդում՝ Հայաստանի Հանրապետությունում գործող հեռուստառադիոհաղորդումներ արտադրող ընկերությունների կողմից կամ Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կամ իրավաբանական անձի պատվերով արտադրված կամ հայերեն թարգմանված հաղորդում.

սեփական հեռուստառադիոհաղորդում՝ հաղորդում, որը տնօրինելու և օգտագործելու իրավունքը պատկանում է տվյալ հեռուստառադիոընկերությանը.

բաժանորդային հեռարձակում՝ հեռարձակում, որը նախատեսված և հասանելի է հեռարձակողի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող անձանց համար.

վերահեռարձակում՝ այլ հեռուստառադիոընկերության հեռուստառադիոծրագրի միաժամանակյա կամ արդեն հեռարձակված և ամրագրված (ձայնագրված և (կամ) տեսագրված) հաղորդման հետագա հեռարձակում այլ լիցենզավորված անձի կողմից.

սփռման տարածք՝ տարածք, որի սահմաններում հեռուստառադիոընկերությունները, տեխնիկական գործող չափանիշներին համապատասխան, ապահովում են ձայնային, տեսաշարային և տեսաձայնաշարային լրատվության կամ տվյալների (լրացուցիչ տեղեկատվության) տարածում.

լրացուցիչ տեղեկատվություն՝ հիմնական հաղորդմանը զուգակցող լուսագրային, գրաֆիկական, ձայնային այլ տեղեկատվություն.

պաշտոնական հաղորդագրություն (տեղեկատվություն)՝ ~~Հայաստանի~~ Հանրապետության ~~Ն~~նախագահի, Ազգային ժողովի, ~~Կ~~կառավարության, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կենտրոնական ընտրական հանձնաժողովի և Կենտրոնական բանկի գործունեության մասին պաշտոնապես ներկայացված, պետության ներքին և արտաքին քաղաքականությանը վերաբերող, հանրության շահերին առնչվող, արտակարգ իրավիճակներին վերաբերող լրատվություն.

ժեստերի լեզվով թարգմանություն՝ հեռուստահաղորդման համաժամանակյա թարգմանությունը ժեստերի լեզվով.

փոխկապակցված անձինք՝ ամուսին, ծնողներ, երեխաներ, քույրեր, եղբայրներ.

մուլտիպլեքս՝ թվային տեղեկատվության միասնական հոսքում միաձուլված մի քանի հեռուստառադիոծրագրերի և լրացուցիչ տեղեկատվության ամբողջականություն, որը սփռվում է հեռարձակման թվային ցանցի մեկ կապուղով.

(պարբերությունն ուժը կորցրել է 27.10.17 ՀՕ-152-Ն)

հեռարձակման թվային ցանց՝ մուլտիպլեքսների տարածման և (կամ) հեռարձակման ենթակառուցվածքի (սարքավորումների, հաղորդիչ կայանների և հեռարձակման ուղիների) ամբողջություն, որն ապահովում է թվային հեռարձակում Հայաստանի Հանրապետության տարածքում.

մասնավոր մուլտիպլեքսոր՝ ~~Ազգային հ~~Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ, որն ապահովում է մուլտիպլեքսի տարածման կամ հեռարձակման ենթակառուցվածքի տեխնիկական շահագործումը.

Հանրային մուլտիպլեքսոր՝ իրավաբանական անձ, որն իրականացնում է Հանրային հեռարձակման թվային ցանցի շահագործումը.

Հանրային հեռարձակման թվային ցանց՝ Հայաստանի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետությանը 100 տոկոս պատկանող ընկերության սեփականությունը հանդիսացող հեռարձակման թվային ցանց.

տեղական հեռուստառադիոընկերություն՝ մինչև 2015 թվականի հունվարի մեկը գործող և դրանից հետո իր լիցենզիայի պայմանների սահմաններում գործունեությունը շարունակող ~~հեռուստառադիոընկերություն~~հեռուստաընկերություն.

÷

մշտադիտարկում՝ հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների փաստացի գործունեությունը օրենքին և լիցենզիայի պահանջներին համապատասխան իրականացնելու բացահայտման նպատակով իրականացվող դիտարկում.

ուղղակի դիտարկում՝ հեռուստաընկերությունների կամ ռադիոընկերությունների կողմից հեռարձակվող հեռուստառադիոհաղորդումները դիտելու և տեսաձայնագրելու միջոցով իրականացվող մշտադիտարկում

Հոդված 5.1. Հեռուստահաղորդումների հեռարձակումը ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն լուսագրով

(վերնագիրը փոփ. 28.04.14 ՀՕ-12-Ն)

Հանրային ~~հեռուստառադիոընկերությունը~~ հեռուստաընկերությունը և Հայաստանի Հանրապետությունում գործող այն մասնավոր հեռուստաընկերությունները, որոնք հեռարձակում են նաև մանկական և (կամ) լրատվական հեռուստահաղորդումներ, պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել խուլ հանրության համար հնարավոր տեղեկատվության ստացման մատչելիությունը, օրվա եթերաժամում առնվազն մեկական մանկական և լրատվական հեռուստահաղորդում հեռարձակել ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն լուսագրով:

(5.1-ին հոդվածը լրաց. 08.12.11 ՀՕ-327-Ն, փոփ. 28.04.14 ՀՕ-12-Ն)

Հոդված 7. Հեռուստառադիոհաղորդումները և դրանց իրականացման կարգը

1. Հայաստանի Հանրապետությունում հեռուստառադիոծրագրերի հեռարձակումն իրականացվում է լիցենզիայի հիման վրա: Առանց լիցենզիայի հեռարձակում իրականացնում են հ~~Հ~~անրային ~~հեռուստառադիոընկերությունը~~ հեռուստաընկերությունը և հանրային ռադիոընկերությունը և միջպետական պայմանագրի հիման վրա հեռարձակողները:

2. Այլ զանգվածային լրատվության միջոցների կողմից հեռուստառադիոընկերությունների պատրաստած տեղեկատվության տարածման դեպքում հղումն այդ լրատվամիջոցներին պարտադիր է:

3. Ոչ սեփական հեռուստառադիոհաղորդումները կարող են հեռարձակվել միայն դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության դեպքում:

Հեռուստառադիոհաղորդման արտադրության և հեղինակի մասին տեղեկատվության (ենթագրեր, ձայնային ներկայացում) ամբողջական հեռարձակումը պարտադիր է:

Հոդված 9. Օտարերկրյա հեռուստառադիոընկերությունների ծրագրերի հեռարձակումը

1. Օտարերկրյա հեռուստառադիոընկերությունների ծրագրերը Հայաստանի Հանրապետության տարածքում կարող են ամբողջությամբ վերահեռարձակվել միջպետական պայմանագրի կամ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով)~~Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի (այսուհետ՝ Ազգային հանձնաժողով)~~ կողմից վերահեռարձակողին տրված լիցենզիայի հիման վրա:

2. Հայաստանի Հանրապետությունում լիցենզավորված հեռուստառադիոընկերություններն օտարերկրյա հեռուստառադիոընկերությունների ծրագրերը կարող են վերահեռարձակել պայմանագրային հիմունքներով:

3. Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա հեռուստառադիոընկերությունների հեռուստառադիոծրագրերի վերահեռարձակման ժամանակ գովազդի, ներառյալ՝ վերահեռարձակող գովազդի հեռարձակումն արգելվում է: Օրենքով կամ միջազգային պայմանագրերով կարող են սահմանվել այլ կարգավորումներ:

~~**Հոդված 11. Հեռուստառադիոընկերությունները ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելու ժամանակ**~~

~~1. Հեռուստառադիոընկերությունները պարտավոր են ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելու ժամանակ Հայաստանի Հանրապետության Նախագահին կամ նրա լիազորած անձին հատկացնել եթերաժամանակ՝ պաշտոնական հայտարարություններ կատարելու համար: Հատկացվող եթերաժամանակը եթերային յուրաքանչյուր ժամում չի կարող գերազանցել տասը րոպեն:~~

Հոդված 11. Հեռուստաընկերությունները և ռադիոընկերությունները ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելու ժամանակ

1. Հեռուստաընկերությունները և ռադիոընկերությունները պարտավոր են ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ վարչապետին կամ վարչապետի

կողմից լիազորված Կառավարության այլ անդամին հատկացնել եթերաժամանակ՝ պաշտոնական հայտարարություններ կատարելու համար:

2. Հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից եթերաժամանակի հատկացման կարգը և պայմանները սահմանում է Հանձնաժողովը:

~~**Հոդված 15. Հեռուստառադիոընկերությունների տեսակները**~~

~~1. Հայաստանի Հանրապետությունում կարող են լինել հանրային և մասնավոր հեռուստառադիոընկերություններ:~~

~~2. Հայաստանի Հանրապետությունում գործում է առնվազն մեկ հանրային հեռուստառադիոընկերություն (հեռուստաընկերություն և ռադիոընկերություն), որն ստեղծվում (հիմնադրվում) է սույն օրենքով:~~

~~3. Մասնավոր են այն հեռուստառադիոընկերությունները, որոնց հիմնադիրները (մասնակիցները) ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք են:~~

~~4. Հայաստանի Հանրապետությունում գործող մասնավոր հեռուստառադիոընկերություններն օգտվում են հավասար իրավունքներից և օրենքի առջև հավասարապես պատասխանատու են՝ անկախ իրենց կազմակերպական-իրավական տեսակից:~~

Հոդված 13. Հեռուստառադիոհաղորդումների ձայնագրությունների և տեսագրությունների, ինչպես նաև այլ նյութերի պահպանման կարգը

1. Հեռուստառադիոընկերությունները պարտավոր են պահպանել իրենց հեռարձակած հաղորդումների տեսագրություններն ու ձայնագրությունները՝ հեռարձակման օրվանից սկսած մեկ ամիս ժամկետով:

2. Հաղորդումները գրանցվում են հաշվառման մատյանում՝ պարտադիր նշելով հեռարձակման ամիսը, ամսաթիվը, հաղորդման սկզբի և ավարտի ժամը, համառոտ բովանդակությունը, հեռուստառադիոհաղորդման հեղինակների և հեռարձակողի անունը:

3. Հեռուստառադիոընկերությունները հեռուստառադիոհաղորդումների հաշվառման մատյանի տվյալները ներկայացնում են ~~Ազգային Հ~~հանձնաժողով: Հեռուստառադիոհաղորդումների հաշվառման մատյանում հաշվառման կարգը սահմանում է ~~Ազգային հ~~Հանձնաժողովը:

4. Հեռուստառադիոհաղորդումների հաշվառման տվյալների հիման վրա ~~Ազգային հ~~Հանձնաժողովը վերահսկում է հեռուստառադիոընկերությունների գործունեության համապատասխանությունը օրենսդրության և լիցենզիայի պայմաններին: ~~Ազգային հ~~Հանձնաժողովը ընտրանքային սկզբունքով իրականացնում է հեռուստառադիոընկերությունների կողմից հեռարձակվող ծրագրերի ուղղակի դիտարկումներ յուրաքանչյուր հեռուստառադիոընկերության համար ամսվա ընթացքում առնվազն հինգ օր: Դիտարկման արդյունքները համադրվում են հեռուստառադիոընկերությունների ներկայացրած հաշվառման մատյանների տվյալների հետ:

Հեռուստառադիոհաղորդումների հաշվառման վերաբերյալ գրանցումները կարող են կատարվել նաև էլեկտրոնային տարբերակով:

5. Մեկ ամիսը լրանալուց հետո հեռուստառադիոհաղորդումների տեսագրությունները և ձայնագրությունները կարող են ջնջվել, եթե այդ ընթացքում հաղորդումներում տեղ գտած տեղեկությունների հերքման կամ այլ վիճելի հարցերի վերաբերյալ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ, ~~Ազգային հ~~Հանձնաժողով կամ հեռուստառադիոընկերություններ դիմում կամ բողոք կամ դատարան հայց չի ներկայացվել: Նշված ձայնագրություններն ու տեսագրությունները կարող են չպահպանվել վիճելի հարցերի լուծումից հետո:

Հոդված 15. Հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների տեսակները

1. Հայաստանի Հանրապետությունում կարող են լինել հանրային և մասնավոր հեռուստաընկերություններ և ռադիոընկերություններ:

2. Հայաստանի Հանրապետությունում գործում են առնվազն մեկ անկախ հանրային հեռուստաընկերություն և մեկ անկախ հանրային ռադիոընկերություն:

3. Հանրային հեռուստաընկերությունը և հանրային ռադիոընկերությունը հիմնադրվում են Կառավարության որոշմամբ:

4. Հանրային հեռուստաընկերությունը և հանրային ռադիոընկերությունը կարող են հիմնադրվել միայն բաժնետիրական ընկերության ձևով, որի միակ մասնակիցը Հայաստանի Հանրապետությունն է:

5. Հանրային հեռուստատեսության և ռադիոյի գործունեությունը ապահովում են հանրային հեռուստաընկերություններն ու հանրային ռադիոընկերությունները:

6. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով լիազոր մարմինը հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության համար Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդն է (այսուհետ՝ Խորհուրդ):

7. Կառավարության որոշմամբ Խորհրդի կառավարմանը կարող են հանձնվել այլ բաժնետիրական ընկերություններ:

8. Մասնավոր են այն հեռուստաընկերությունները և ռադիոընկերությունները, որոնց հիմնադիրները (մասնակիցները) ֆիզիկական անձինք են կամ իրավաբանական անձինք:

9. Հայաստանի Հանրապետությունում գործող մասնավոր հեռուստաընկերությունները և ռադիոընկերությունները օգտվում են հավասար իրավունքներից և օրենքի առջև հավասարապես պատասխանատու են՝ անկախ իրենց կազմակերպաիրավական ձևից:

Հոդված 16. Հեռուստառադիոընկերությունների հիմնադիրները

1. Հեռուստառադիոընկերությունների հիմնադիրներ կարող են լինել իրավաբանական և ֆիզիկական անձինք, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի:

2. Հեռուստառադիոընկերությունների հիմնադրման (ստեղծման) ժամանակ կամ դրանից հետո օտարերկրյա կապիտալի մասնակցության բաժինը չպետք է հավասար կամ ավելի լինի հեռարձակող կազմակերպության որոշումների ընդունման համար անհրաժեշտ բաժնեմասերի հիսուն տոկոսից: Ավելի մեծ բաժնեմաս կարող է սահմանվել միջպետական պայմանագրերով:

3. Մասնավոր հեռուստառադիոընկերությունների հիմնադիրներ (մասնակիցներ) չեն կարող լինել՝

1) ~~Հայաստանի~~ Հանրապետության ~~ո~~Ն~~ա~~խագահը և նրան փոխկապակցված անձինք.

2) պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինները.

3) ~~Հայաստանի Հանրապետության կ~~Կառավարության անդամները և նրանց փոխկապակցված անձինք.

4) ~~Հայաստանի Հանրապետության~~ Ազգային ժողովի պատգամավորները և նրանց փոխկապակցված անձինք.

5) տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները և նրանց փոխկապակցված անձինք.

6) ~~Հանրային հեռուստառադիոընկերության խ~~Խորհրդի անդամները և նրանց փոխկապակցված անձինք.

7) ~~Ազգային հ~~Հանձնաժողովի անդամները և նրանց փոխկապակցված անձինք.

8) դատավորները և նրանց փոխկապակցված անձինք.

9) կուսակցությունները.

10) դատարանի վճռով անգործունակ ճանաչված, օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող անձինք, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված անձինք, որոնց դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

11) 18 տարին չլրացած քաղաքացիները:

Հոդված 22. Հեռուստառադիոհաղորդումների չարաշահման անթույլատրելիությունը

1. Արգելվում է հեռուստառադիոհաղորդումներն օգտագործել՝

1) իշխանությունը ~~բռնի զավթելու~~ յուրացնելու, Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոխելու և տապալելու քարոզչության,

2) ազգային, ռասայական և կրոնական թշնամանք կամ երկպառակություններ սերմանելու,

3) պատերազմ քարոզելու,

4) քրեորեն պատժելի կամ գործող օրենսդրությամբ արգելված արարքների կոչեր տարածելու,

5) պոռնկագրություն տարածելու,

6) բռնության և դաժանության պաշտամունք պարունակող կամ քարոզող հաղորդումներ հեռարձակելու նպատակներով:

Բացառություն կարող են լինել պատմափաստավավերագրական նյութերի օգտագործումն ու ցուցադրումը:

2. Էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումները և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումները, բացառությամբ բաժանորդային հեռարձակման, կարող են եթեր հեռարձակվել ժամը 24.00-6.00-ն: Նման հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանվում են ~~օրենքով~~ Հանձնաժողովի կողմից:

3. Պետության կողմից հայտարարված սգո օրերին գովազդի և զվարճալի հաղորդումների հեռարձակումը հեռուստառադիոընկերությունների կողմից արգելվում է:

Հոդված 23. Արբանյակային հեռուստառադիոհեռարձակումը և հեռահաղորդակցությունը

1. Հեռուստառադիոընկերություններն արբանյակային հեռարձակում կարող են իրականացնել համապատասխան արբանյակային գործակալության հետ պայմանագրի առկայության դեպքում: Հեռուստաընկերությունն արբանյակային հեռարձակման մասին գրավոր տեղեկացնում է ~~Ազգային հ~~Հանձնաժողովին հեռարձակման համար նախատեսված օրվանից հինգ աշխատանքային օր առաջ:

Հոդված 25. Բաժանորդային հեռարձակումը

1. Բաժանորդային հեռարձակման նկատմամբ թեմատիկ, բովանդակային և լեզվական սահմանափակումներ չեն սահմանվում, բացառությամբ սույն օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

2. Լիցենզավորված հեռուստառադիոընկերություններն իրենց գործունեության ընթացքում բաժանորդային հեռարձակման անցնելու դեպքում պարտավոր են ստանալ ~~Ազգային հ~~Հանձնաժողովի թույլտվությունը:

~~Գ Լ ՈՒ Խ 4~~

~~ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԳԻՈՐԾՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ~~

~~Հոդված 26. Հանրային հեռուստառադիոընկերության կարգավիճակը և գործունեության սկզբունքները~~

~~1. Հանրային հեռուստառադիոընկերությունը հատուկ կարգավիճակ ունեցող պետական հիմնարկ է, որի իրավական վիճակի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով: Մարդու սահմանադրական իրավունքն ապահովելու նպատակով պետությունը ստեղծում է անկախ հանրային հեռուստառադիոընկերություն, որի գործունեությունն ապահովում է տեղեկատվական, քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, մանկապատանեական, գիտական, հայոց լեզվի և պատմության, մարզական, ժամանցային և հանրության համար կարևոր ու նշանակալից այլ տեղեկատվական բնույթի հաղորդումների բազմազանություն:~~

~~Հանրային հեռուստառադիոընկերությունը գործում է սույն օրենքին, իր կանոնադրությանը և Հայաստանի Հանրապետության իրավական այլ ակտերին համապատասխան:~~

~~2. Հանրային հեռուստառադիոընկերության հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման բնագավառում գործունեությունն իրականացնում է Հանրային հեռուստաընկերությունը, իսկ ռադիոհաղորդումների բնագավառում՝ Հանրային ռադիոընկերությունը: Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության ղեկավարման մարմինը Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդն է:~~

~~3. Հանրային հեռուստառադիոընկերությամբ հեռարձակման ենթակա պաշտոնական հաղորդագրության (տեղեկատվության) արտադրությունն իրականացնում են այդ հաղորդագրությունը (տեղեկատվությունը) ներկայացնող մարմնի աշխատակազմը (ստորաբաժանումը) կամ այդ մարմնի համաձայնությամբ՝ Հանրային հեռուստառադիոընկերությունը կամ այլ հեռուստառադիոընկերություններ:~~

~~4. Հանրային հեռուստառադիոընկերությունը ղեկավարվում է օբյեկտիվության, ժողովրդավարության, անկողմնակալության, բազմազանության, բազմակարծության սկզբունքներով և ապահովում է խոսքի, խղճի ու ստեղծագործության ազատություն:~~

~~5. Հանրային հեռուստառադիոընկերությունը պարտավոր է՝~~

~~1) օրվա եթերաժամի առնվազն երկու երրորդը հատկացնել հայրենական արտադրության հաղորդումներին:~~

~~2) ապահովել հեռարձակվող հաղորդումների թեմատիկ, բովանդակային բազմազանությունը հնարավոր հաղորդաշարերի և հաղորդումների տեսակների տեսքով:~~

~~3) մշակել և իրականացնել ծրագրային քաղաքականություն՝~~

~~ա. հասարակական առավել հնչեղություն ունեցող տեղեկատվության հեռարձակման համար օգտագործել ամենահարմար եթերային ժամանակը՝ ներկայացնելով խնդրի կամ հարցի վերաբերյալ պաշտոնական հաղորդագրությունը (տեղեկատվությունը), կարծիքների բազմազանությունը,~~

~~բ. հեռուստառադիոլսարանին մատուցել այնպիսի հաղորդաշարեր և հաղորդումների տեսակներ, որոնցում ներկայացվում են Հայաստանի Հանրապետության տարբեր տարածաշրջանների, ազգային փոքրամասնությունների, հասարակության տարբեր շերտերի ու սոցիալական խմբերի շահերը,~~

~~գ. *(կետն ուժը կորցրել է 08.12.11 ՀՕ-327-Ն)*~~

~~դ. եթերային ժամանակ տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրերի և հաղորդումների հեռարձակման համար: Այդ հաղորդումների ընդհանուր ժամաքանակը չպետք է գերազանցի հեռուստատեսությամբ շաբաթական մինչև 2 ժամը, իսկ ռադիոյով՝ օրական մինչև 1 ժամը: Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրերը և հեռուստահաղորդումները պետք է ուղեկցվեն հայերեն լուսագրով:~~

~~6. Հանրային հեռուստառադիոընկերությունում՝~~

~~1) *(կետն ուժը կորցրել է 17.12.14 ՀՕ-227-Ն)*~~

~~2) հեռարձակվող հաղորդումներում քաղաքական դիրքորոշման գերակշռությունը և նախընտրական (հանրաքվեի նախապատրաստական) քարոզչության իրականացման համար օրենքով նախատեսված ժամանակահատվածից դուրս նախընտրական (հանրաքվեի նախապատրաստական) քարոզչական հաղորդումների առկայությունն արգելվում է.~~

~~3) Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, կառավարության պաշտոնական հաղորդագրությունների (տեղեկատվության) տևողությունը նրանցից յուրաքանչյուրի համար մեկ օրվա ընթացքում չի կարող գերազանցել 3 րոպեն:~~

~~6.1. Հանրային հեռուստատեսությամբ արգելվում է ցուցադրել գովազդ, բացառությամբ սոցիալական գովազդի, ինչպես նաև մշակութային, ուսումնական, գիտակրթական և սպորտային հեռուստահաղորդումների ցուցադրման ժամանակ հովանավորների մասին՝ սույն օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան տեղեկություններ նշելու դեպքերի, բայց ոչ ավել, քան մեկ հովանավոր յուրաքանչյուր մշակութային, ուսումնական, գիտակրթական և սպորտային հեռուստահաղորդման ցուցադրման ժամանակ: Հանրային հեռուստատեսությամբ ցուցադրվող սոցիալական գովազդի, ինչպես նաև մշակութային, ուսումնական, գիտակրթական և սպորտային հեռուստահաղորդումների ցուցադրման ժամանակ հովանավորների մասին հիշատակումը չպետք է գերազանցի հաղորդման տևողության 2.5 տոկոսը:~~

~~Սույն մասի դրույթները չեն տարածվում հանրային հեռուստատեսության արբանյակային կապով եթերի հեռարձակումների, ինչպես նաև հանրային հեռուստատեսությամբ միջազգային հեղինակավոր մշակութային և (կամ) սպորտային իրադարձությունների այն վերահեռարձակումների վրա, որոնց շրջանակներում դրանց կազմակերպիչների պահանջով պարտադիր պետք է ցուցադրվեն գովազդներ:~~

~~7. Հանրային հեռուստառադիոընկերության աշխատակիցների գործադուլի ժամանակ վերջիններս պարտավոր են ապահովել լրատվական ծրագրերի օրական առնվազն 2 թողարկում՝ առավոտյան և երեկոյան:~~

~~8. Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության կանոնադրությունները հաստատում է Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը:~~

~~***(26-րդ հոդվածը փոփ. 08.12.11 ՀՕ-327-Ն, լրաց., փոփ.17.12.14 ՀՕ-227-Ն)***~~

-

~~**Հոդված 27. Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը**~~

-

~~1. Հանրային հեռուստառադիոընկերության ղեկավար մարմինը Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդն է (այսուհետ՝ Խորհուրդ):~~

~~Խորհուրդը բաղկացած է հինգ անդամից (առնվազն մեկը՝ կին), որոնց, իր հաստատած մրցութային կարգի համաձայն, նշանակում է Հայաստանի Հանրապետության Նախագահը:~~

~~2. Խորհրդի անդամները նշանակվում են վեց տարի ժամկետով: Խորհուրդն իր կազմից ընտրում է Խորհրդի նախագահ և տեղակալ:~~

~~3. Խորհրդի նախագահը և անդամներն իրենց աշխատանքներն իրականացնում են վճարովի հիմունքներով՝ Հանրային հեռուստառադիոընկերության միջոցների հաշվին:~~

~~3.1. Խորհրդի անդամների վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:~~

~~4. Խորհրդի անդամները պետք է լինեն լրագրության, իրավագիտության, հեռուստառադիոհեռարձակման կառավարման բնագավառի, գիտության, մշակույթի և արվեստի գործիչներ, հեղինակավոր և որակյալ մասնագետներ, ունենան բարձրագույն կրթություն և տիրապետեն հայոց լեզվին:~~

~~5. Խորհրդի անդամ չեն կարող լինել՝~~

~~1) կուսակցությունների ղեկավար մարմինների անդամները.~~

~~2) օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք.~~

~~3) Հանրային և մասնավոր հեռուստառադիոընկերությունների ղեկավարները.~~

~~4) հեռուստառադիոընկերությունների հետ ծառայությունների մատուցման և (կամ) աշխատանքային պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող անձինք.~~

5) անձինք, որոնք դատապարտվել են դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ:

Խորհուրդը գործում է սույն օրենքի, իր կանոնակարգի, այլ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա և ինքնուրույն է իր իրավասության շրջանակներում:

6. Խորհրդի յուրաքանչյուր անդամ իր պաշտոնը ստանձնելիս տալիս է հետևյալ երդումը.

«Ստանձնելով Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի անդամի պարտականությունները՝ երդվում եմ, հավատարիմ լինելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին, պաշտպանել մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, աջակցել քաղաքացիական հասարակության ձևավորմանը՝ մարդու արտահայտվելու իրավունքի, տեղեկատվության ազատության և բազմակարծության ապահովման միջոցով:

Երդվում եմ, որ պարտականություններս կկատարեմ անաչառ, առավելագույն բարեխղճությամբ և ազնվությամբ, կգործեմ հրապարակայնության, անկողմնակալության և արդարության սկզբունքով՝ անկախ որևէ քաղաքական կամ տնտեսական շահից»:

(27-րդ հոդվածը լրաց. 12.12.13 ՀՕ-177-Ն)

-

Հոդված 28. Խորհրդի գործունեության կարգը

-

1. Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է ամենօրյա գործունեության և հրավիրվող հերթական ու արտահերթ նիստերի միջոցով:

Խորհրդի հերթական նիստերը գումարում է Խորհրդի նախագահը՝ ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ:

2. Խորհրդի նախագահի բացակայության, ինչպես նաև նրա կողմից իր պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նիստը վարում է Խորհրդի նախագահի տեղակալը:

3. Խորհրդի արտահերթ նիստը հրավիրում է Խորհրդի նախագահը՝

1) իր նախաձեռնությամբ.

2) Խորհրդի առնվազն երկու անդամի պահանջով:

4. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դա վարում է Խորհրդի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ տեղակալը, և նիստին ներկա է Խորհրդի անդամների կեսից ավելին:

5. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա՝ Խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:

6. Խորհրդի նիստերը դռնբաց են: Խորհուրդն ապահովում է իր գործունեության հրապարակայնությունը:

-

~~Հոդված 29. Խորհրդի նախագահը, տեղակալը և անդամները~~

~~1. Խորհրդի նախագահը՝~~

~~1) կազմակերպում է Խորհրդի և նրա աշխատակազմի գործունեությունը.~~

~~2) գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք, ստորագրում է Խորհրդի ընդունած որոշումները և նիստերի արձանագրությունները.~~

~~3) վերահսկում է Խորհրդի որոշումների կատարումը.~~

~~4) համակարգում և ապահովում է Հանրային հեռուստառադիոընկերության և Խորհրդի բնականոն աշխատանքը:~~

~~2. Խորհրդի նախագահը և անդամներն իրենց պարտականությունների կատարման ընթացքում չեն կարող զբաղվել վճարովի այլ աշխատանքով, բացի մանկավարժական, ստեղծագործական և գիտական գործունեությունից:~~

~~3. Խորհրդի նախագահի տեղակալը Խորհրդի նախագահի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում փոխարինում է նրան:~~

~~4. Խորհրդի անդամները նախքան պաշտոնավարման ժամկետը լրանալը չեն կարող հետ կանչվել իրենց պաշտոններից, բացառությամբ այն դեպքերի, երբ Խորհրդի անդամը՝~~

~~1) հրաժարական է տվել.~~

~~2) ընտրվել կամ նշանակվել է որևէ պաշտոնում.~~

~~3) առանց հարգելի պատճառի 3 ամսից ավելի չի մասնակցել Խորհրդի աշխատանքներին.~~

~~4) դատապարտվել է դատարանի դատավճռով.~~

~~5) կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.~~

~~6) մահացել է.~~

~~7) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ճանաչվել է անգործունակ:~~

~~Նշված դեպքերում Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով:~~

~~5. Խորհրդում թափուր տեղի առկայության դեպքում Խորհրդի նախագահն այդ մասին գրավոր տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության Նախագահին, որը մեկշաբաթյա ժամկետում զանգվածային լրատվության միջոցներով հայտարարում է թափուր տեղի համալրման համար մրցույթ:~~

~~Խորհրդի անդամի թափուր տեղի համար թեկնածու կարող է առաջադրվել յուրաքանչյուր ոք՝ սույն օրենքի պահանջների համաձայն:~~

~~Թեկնածուների առաջադրման համար սահմանվում է առնվազն 10-օրյա ժամկետ:~~

Թեկնածուների վերաբերյալ տվյալները հրապարակվում են զանգվածային լրատվության միջոցներով:

6. Հայաստանի Հանրապետության Նախագահը, իր հաստատած մրցութային կարգի համաձայն, մրցույթում հաղթողներից մեկին նշանակում է Խորհրդի անդամ: Այդ մասին տեղեկությունը՝ անհրաժեշտ հիմնավորմամբ, հրապարակվում է զանգվածային լրատվության միջոցներով:

Նույն անձը չի կարող ոչ ավելի, քան 2 անգամ անընդմեջ ընդգրկվել Խորհրդի կազմում:

-

Հոդված 30. Խորհրդի իրավասությունները

-

1. Խորհուրդը՝

1) սահմանում է Հանրային հեռուստառադիոընկերության հաղորդումների հեռարձակման ընդհանուր ծավալը և հեռուստառադիոծրագրերի (հեռուստաալիքների) թիվը: Այդ թիվը չի կարող պակաս լինել չորսից (երկու հեռուստածրագիր և երկու ռադիոծրագիր), ընդ որում՝ սահմանված հեռուստածրագրերից (հեռուստաալիքներից) առնվազն մեկը պետք է ունենա ընդհանուր ուղղվածություն, մյուսը՝ հոգևոր-մշակութային.

2) սահմանում է Հանրային հեռուստառադիոընկերության ֆինանսական միջոցների օգտագործման կարգը և ուղղությունները.

3) հաստատում է Հանրային հեռուստառադիոընկերության աշխատողների կարգավիճակը և պաշտոնները, նրանց հետ կնքվող պայմանագրերի ձևերը, պայմանները և վարձատրման կարգը.

4) սահմանում է այն պաշտոնների ցանկը, որոնք զբաղեցնողներն իրավունք չունեն աշխատելու այլ հեռուստառադիոընկերություններում և զանգվածային լրատվության միջոցներում.

5) սահմանում է Հանրային հեռուստաընկերության և (կամ) Հանրային ռադիոընկերության գործադիր տնօրենների թափուր տեղերի մրցույթի կարգը.

6) նշանակում է մրցույթում հաղթած Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության գործադիր տնօրեններին, իսկ իրենց պարտականություններն անբավարար կատարելու դեպքում պաշտոնից ազատում է Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության գործադիր տնօրեններին: Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության գործադիր տնօրենները պաշտոնի են նշանակվում և պաշտոնից ազատվում են Խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ.

7) Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության գործադիր տնօրենների ներկայացմամբ հաստատում է գործադիր տնօրենների տեղակալներին.

8) առնվազն տարին մեկ լսում է Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության գործադիր տնօրենների հաշվետվությունները:

2. Խորհրդի որոշումները կատարվում են Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության գործադիր տնօրենների կողմից:

3. Խորհրդի գործունեությունը հրապարակային է: Խորհուրդն իր գործունեության, ընդունած որոշումների և ծրագրերի մասին պարբերաբար տեղեկատվություն է տրամադրում զանգվածային լրատվության միջոցներին:

Խորհուրդն իր գործունեության մասին ամենամյա հաղորդում է ներկայացնում Հայաստանի Հանրապետության Նախագահին և Ազգային ժողով:

-

Հոդված 31. Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության գործադիր ղեկավարության իրավասությունները

-

1. Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության գործադիր տնօրենները և նրանց տեղակալները՝

1) ղեկավարում են Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության ընթացիկ գործունեությունը.

2) հաստատում են ծրագրերի կառուցվածքը, դրանց առանձին բաժինների համամասնությունները, հաղորդացանցը.

3) հաստատում են վարչական կառուցվածքը, արձակում են հրամաններ, կնքում են պայմանագրեր և վերահսկում դրանց կատարումը.

4) սահմանում են Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության աշխատակազմերի վարձատրման կարգը.

5) մասնակցում են Խորհրդի աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով.

6) Հայաստանի Հանրապետությունում, օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում ներկայացնում են Հանրային հեռուստաընկերությունը և Հանրային ռադիոընկերությունը:

-

Հոդված 32. Խորհրդի աշխատակազմը

-

1. Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է աշխատակազմի միջոցով, որի կառուցվածքը և աշխատակիցների թվաքանակը հաստատում է Խորհուրդը՝ Խորհրդի նախագահի ներկայացմամբ:

-

Հոդված 33. Հանրային հեռուստառադիոընկերության պետական ֆինանսավորումը

-

1. Յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասում, նախորդ տարվա համեմատ, բյուջեի եկամտային մասի աճի դեպքում Հանրային հեռուստառադիոընկերության համար նախատեսվում են նախորդ տարվա պետական բյուջեով հաստատված ոչ պակաս հատկացումներ: Այդ հատկացումները պետք է ապահովեն օրենքով ամրագրված՝ Խորհրդի լիազորությունների իրականացումը:

2. Խորհուրդը յուրաքանչյուր տարի կազմում է հաջորդ տարվա՝ Հանրային հեռուստառադիոընկերության ծախսերի նախահաշիվը (բյուջեն)՝ առանձին տողով նշելով Խորհրդին, Հանրային հեռուստաընկերությանը և Հանրային ռադիոընկերությանը հատկացվելիք գումարները և ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարություն, վերջինս էլ դրանք ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հաստատմանը:

-

Հոդված 34. Խորհրդի տարեկան հաղորդումը

-

1. Խորհուրդը մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը Ազգային ժողով է ներկայացնում Հանրային հեռուստառադիոընկերության նախորդ տարվա գործունեության (ներառյալ՝ ծրագրային և ֆինանսական), ինչպես նաև սույն օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթների կատարման վերաբերյալ հաղորդում:

Հաղորդումն Ազգային ժողովի նիստում ներկայացնում է Խորհրդի նախագահը: Հաղորդումն Ազգային ժողովի նիստում քննարկվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ընդունվում է ի գիտություն:

2. Խորհուրդը հաղորդումը հրապարակում է մամուլում, ինչպես նաև տեղադրում է Հանրային հեռուստատեսության և Հանրային ռադիոընկերության համացանցային կայքէջերում:

-

ԳԼՈՒԽ 5

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

-

Հոդված 35. Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը

-

1. Ազգային հանձնաժողովը կարգավորող անկախ մարմին է, որի նպատակն է ապահովել հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորումը, ինչպես նաև հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների գործունեության վերահսկումը:

~~2. Ազգային հանձնաժողովն իր լիազորություններն իրականացնելիս կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, ձեռք բերել ծառայություններ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:~~

~~3. Ազգային հանձնաժողովն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանով և իր անվանմամբ կնիք, դրոշմակնիք, ձևաթուղթ և անհատականացման այլ միջոցներ:~~

~~4. Ազգային հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասության շրջանակներում կամ հատուկ լիազորությունների առկայության դեպքում ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունն այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում:~~

~~Ազգային հանձնաժողովը կարող է համագործակցել այլ պետությունների համապատասխան կառույցների և միջազգային շահագրգիռ կազմակերպությունների հետ:~~

~~5. Ազգային հանձնաժողովի նստավայրը Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքն է:~~

~~Իր որոշմամբ Ազգային հանձնաժողովը կարող է արտագնա նիստեր գումարել նաև Հայաստանի Հանրապետության մյուս բնակավայրերում:~~

~~**Հոդված 36. Ազգային հանձնաժողովի գործառույթները**~~

~~1. Օրենքով սահմանված իր նպատակներին համապատասխան՝ Ազգային հանձնաժողովը՝~~

~~1) իրականացնում է հեռուստառադիոհեռարձակողների եթերային հեռարձակման լիցենզավորումը մրցույթի միջոցով և ապահովում մրցույթի արդյունքների մասին ամբողջական տեղեկատվության հրապարակումը.~~

~~2) իրականացնում է հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) ցանցով հեռարձակման լիցենզավորումը.~~

~~3) սահմանում է թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռարձակելու համար հեռուստաընկերությունների մրցույթի անցկացման կարգը.~~

~~4) հաստատում լիցենզիայի ձևերը.~~

~~5) տալիս է լիցենզիաներ.~~

~~6) տարին մեկ հրապարակում է եթերային հաճախականությունների ամբողջական ցանկը՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կազմած և պարբերաբար իրեն տրամադրվող՝ Հայաստանի Հանրապետության տարածքում հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման համար նախատեսված եթերային հաճախականությունների ցանկը.~~

~~7) կազմում և հրապարակում է լիցենզավորված անձանց ցուցակը, հսկում է լիցենզիայում նշված պայմանների կատարումը.~~

~~8) թույլատրում է հեռուստառադիոընկերությունների կողմից բաժանորդային հեռարձակումը.~~

9) հեռուստառադիոհաղորդումների տեսագրությունների և ձայնագրությունների օգտագործման միջոցով պարզում է դրանց համապատասխանությունը գործող օրենսդրությանը.

10) հսկում է հեռուստառադիոհաղորդումների պատրաստման տեխնիկական չափանիշների, ինչպես նաև տեխնիկական միջոցների համապատասխանությունը գործող ստանդարտներին և տրված հավաստագրին.

11) սույն օրենքի խախտման կամ լիցենզիայի պայմանները և(կամ) իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է օրենքով սահմանված վարչական տույժեր.

12) վերահսկում է հեռուստառադիոընկերության (հեռուստաընկերության կամ ռադիոընկերության) կողմից նախընտրական քարոզչության՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգի պահպանումը և նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտումներ հայտնաբերելու դեպքում իրավասու է դիմելու դատարան՝ տվյալ հեռուստառադիոընկերությանը (հեռուստաընկերությանը կամ ռադիոընկերությանը) օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու հայցով.

13) ստանում, գրանցում, ուսումնասիրում և հիմնավոր պատասխանում կամ եզրակացություն է տալիս ցանկացած հեռուստառադիոընկերության գործունեության վերաբերյալ բողոքներին, առաջարկություններին և հարցումներին.

14) իրականացնում է հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկում.

15) կարող է ներգրավվել հեռուստատեսության և ռադիոյի բնագավառին առնչվող միջպետական պայմանագրերի ու օրենսդրական նախագծերի մշակմանը.

16) իր վերահսկողական գործառույթներն իրականացնելու նպատակով ուսումնասիրություններ և ստուգումներ է իրականացնում հեռուստառադիոընկերություններում «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դեպքերում.

17) իր աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով ընդունում է իրավական ակտեր:

2. Ազգային հանձնաժողովն իրավասու մարմիններից, կազմակերպություններից, պաշտոնատար անձանցից պահանջում և ստանում է իր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվություն:

3. Ազգային հանձնաժողովն իր լիազորություններն իրականացնելիս կարող է հասարակական կամ պայմանագրային հիմունքներով ներգրավել մասնագետների և փորձագետների:

4. Ազգային հանձնաժողովն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

-

~~Հոդված 37. Ազգային հանձնաժողովի գործունեության իրավական հիմքերը և սկզբունքները~~

-

~~1. Ազգային հանձնաժողովի գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով, իր կողմից ընդունվող իրավական ակտերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության իրավական այլ ակտերով:~~

~~2. Ազգային հանձնաժողովի գործունեության սկզբունքներն են օրինականությունը, ժողովրդավարությունը, հավասարությունը, անաչառությունը, ինքնուրույնությունը, կոլեգիալությունը և հրապարակայնությունը:~~

-

~~Հոդված 38. Ազգային հանձնաժողովի կազմավորման կարգը~~

-

~~1. Ազգային հանձնաժողովը բաղկացած է ութ անդամից: Ազգային հանձնաժողովի անդամների կեսը մրցութային կարգով վեց տարի ժամկետով ընտրվում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից, իսկ մյուս կեսը վեց տարի ժամկետով նշանակվում է Հանրապետության Նախագահի կողմից:~~

~~2. Ազգային հանձնաժողովի անդամի թափուր տեղ առաջանալու դեպքում թափուր տեղում նշանակումը կամ ընտրությունը կատարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.2-րդ հոդվածին համապատասխան՝ ապահովելով Ազգային հանձնաժողովի անդամների կեսի ընտրությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, իսկ մյուս կեսի նշանակումը Հանրապետության Նախագահի կողմից:~~

~~3. Ազգային հանձնաժողովի անդամի թափուր տեղ առաջանալու դեպքում Ազգային հանձնաժողովի նախագահն այդ մասին մեկշաբաթյա ժամկետում հայտնում է համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին կամ Հանրապետության Նախագահին:~~

~~4. Ազգային ժողովը Ազգային հանձնաժողովի անդամի ընտրությունը կատարում է Ազգային ժողովի որոշմամբ՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:~~

~~5. Հանրապետության Նախագահը, իր հաստատած մրցութային կարգի համաձայն, մրցույթում հաղթած թեկնածուին նշանակում է Ազգային հանձնաժողովի անդամ: Այդ մասին տեղեկությունը անհրաժեշտ հիմնավորմամբ հրապարակվում է մամուլում և զանգվածային լրատվության մյուս միջոցներով:~~

~~6. Ազգային հանձնաժողովի անդամ նշանակողի (ընտրողի) կողմից Ազգային հանձնաժողովում իր կողմից նշանակվելիք հերթական անդամին չնշանակելը (չընտրելը) հիմք չէ~~

~~Ազգային հանձնաժողովի մյուս անդամ նշանակողի (ընտրողի)՝ իր նշանակմանը (ընտրմանը) ենթակա հաջորդ թափուր տեղի համար անդամ չնշանակելու (չընտրելու) համար:~~

~~7. Ազգային հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ և նախագահի տեղակալ:~~

~~8. Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել և (կամ) ընտրվել Ազգային հանձնաժողովի անդամ:~~

-

~~Հոդված 39.~~ ~~Ազգային հանձնաժողովի անդամներին ներկայացվող պահանջները, նրանց վարձատրության կարգը~~

-

~~1. Ազգային հանձնաժողովի անդամ կարող է լինել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որն ունի լրագրության, հեռուստատեսության և ռադիոյի, տնտեսության, կառավարման, տեխնիկայի, մշակույթի, արվեստի, գիտության և իրավագիտության, կրոնի բնագավառներում մասնագիտական աշխատանքի փորձ, բարձրագույն կրթություն, հասարակության լայն շրջանում՝ հեղինակություն ու վստահություն և տիրապետում է հայերենին:~~

~~2. Ազգային հանձնաժողովի անդամ չեն կարող լինել՝~~

~~1) կուսակցությունների ղեկավար մարմինների անդամները և նրանց փոխկապակցված անձինք.~~

~~2) հանրային կամ մասնավոր հեռուստառադիոընկերությունների ղեկավարները և նրանց փոխկապակցված անձինք.~~

~~3) հեռուստառադիոընկերությունների հետ պայմանագրային հարաբերությունների մեջ մտած անձինք, ներառյալ՝ Հանրային և մասնավոր հեռուստառադիոընկերությունների աշխատողները.~~

~~4) այն անձինք, ովքեր դատապարտվել են դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.~~

~~5) Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորները, Հայաստանի Հանրապետության կառավարության անդամները, Հանրապետության Նախագահի աշխատակազմի աշխատակիցները և պետական ծառայողները:~~

~~3. Ազգային հանձնաժողովի անդամները չեն կարող լինել կուսակցության ղեկավար մարմնի անդամ, ինչպես նաև չեն կարող իրենց կարգավիճակը գործադրել ի շահ կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների:~~

~~4. Ազգային հանձնաժողովի նախագահը, տեղակալը և անդամները չեն կարող միաժամանակ զբաղվել վճարովի այլ աշխատանքով, բացառությամբ մանկավարժական, գիտական և ստեղծագործական գործունեության:~~

~~Ազգային հանձնաժողովի նախագահը, տեղակալը կամ անդամները չեն կարող լինել որևէ հեռուստառադիոընկերության հիմնադիր և (կամ) փայատեր (բաժնետեր, մասնակից) և (կամ) նրանց փոխկապակցված անձ։~~

~~5. Ազգային հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ իր պաշտոնն ստանձնելիս տալիս է հետևյալ երդումը.~~

~~«Ստանձնելով Ազգային հանձնաժողովի անդամի պարտականությունները՝ երդվում եմ, հավատարիմ լինելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին, պաշտպանել մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, աջակցել քաղաքացիական հասարակության ձևավորմանը՝ մարդու արտահայտվելու իրավունքի, տեղեկատվության ազատության և բազմակարծության ապահովման միջոցով։~~

~~Երդվում եմ, որ պարտականություններս կկատարեմ անաչառ, առավելագույն բարեխղճությամբ և ազնվությամբ, կգործեմ հրապարակայնության, անկողմնակալության և արդարության սկզբունքով՝ անկախ որևէ քաղաքական կամ տնտեսական շահից»։~~

~~6. Ազգային հանձնաժողովի անդամներն իրենց աշխատանքներն իրականացնում են վճարովի հիմունքներով։~~

~~Ազգային հանձնաժողովի անդամի վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով։~~

~~***(39-րդ հոդվածը փոփ. 13.11.12 ՀՕ-193-Ն, խմբ. 12.12.13 ՀՕ-177-Ն)***~~

-

~~**Հոդված 40. Ազգային հանձնաժողովի նախագահը և նախագահի տեղակալը**~~

-

~~1. Ազգային հանձնաժողովի նախագահը օրենքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում՝~~

~~1) ապահովում է Ազգային հանձնաժողովի բնականոն գործունեության կազմակերպումը.~~

~~2) ներկայացնում է Ազգային հանձնաժողովն այլ մարմինների հետ հարաբերություններում.~~

~~3) ձևավորում է նիստերի օրակարգը, հրավիրում և վարում է Ազգային հանձնաժողովի նիստերը, ընդ որում՝ Ազգային հանձնաժողովի անդամը մասնակցում է Ազգային հանձնաժողովի նիստերի օրակարգի ձևավորմանը օրակարգի վերաբերյալ Ազգային հանձնաժողովի նախագահին առաջարկություններ ներկայացնելու միջոցով.~~

~~4) ստորագրում և հրապարակում է Ազգային հանձնաժողովի որոշումները, արձակում է հրամաններ.~~

~~5) վերահսկում է Ազգային հանձնաժողովի ընդունած որոշումների կատարումը.~~

~~6) Ազգային հանձնաժողովի նախորդ տարվա գործունեության մասին հաղորդումը ներկայացնում է Ազգային ժողով.~~

7) իրականացնում է աշխատակազմի ընդհանուր ղեկավարումը.

8) Ազգային հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում աշխատակազմի կանոնադրության նախագիծը, կառուցվածքը և հաստիքացուցակը.

9) օրենքով սահմանված կարգով նշանակում և ազատում է Ազգային հանձնաժողովի աշխատակիցներին.

10) իրականացնում է օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

2. Ազգային հանձնաժողովի նախագահի տեղակալը՝

1) փոխարինում է Ազգային հանձնաժողովի նախագահին նրա բացակայության ընթացքում.

2) Ազգային հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ վարում է Ազգային հանձնաժողովի նիստերը.

3) Ազգային հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ համակարգում է Ազգային հանձնաժողովի և նրա աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքները.

4) իրականացնում է Ազգային հանձնաժողովի նախագահի պատվիրակած այլ լիազորություններ:

-

Հոդված 41. Ազգային հանձնաժողովի անդամի լիազորությունների դադարեցումը

-

1. Ազգային հանձնաժողովի անդամը չի կարող նախքան պաշտոնավարության ժամկետը լրանալը հետ կանչվել իր պաշտոնից: Ազգային հանձնաժողովի անդամի լիազորությունները կարող են դադարեցվել այն դեպքերում, երբ՝

1) հրաժարական է տվել.

2) ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնի.

3) առանց հարգելի պատճառի երեք ամսից ավելի չի մասնակցել Ազգային հանձնաժողովի աշխատանքներին.

4) դատապարտվել է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով.

5) դատարանի վճռով ճանաչվել է անգործունակ.

6) կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.

7) մահացել է:

2. Հայաստանի Հանրապետության Նախագահի նշանակած Ազգային հանձնաժողովի անդամի լիազորությունները սույն օրենքով սահմանված դեպքերում վաղաժամկետ դադարեցվում են Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով:

3. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նշանակած Ազգային հանձնաժողովի անդամի լիազորությունները սույն օրենքով սահմանված դեպքերում վաղաժամկետ դադարեցվում են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի որոշմամբ:

-

~~Հոդված 42.~~ ~~Ազգային հանձնաժողովի ծախսերի ֆինանսավորումը~~

-

~~1. Ազգային հանձնաժողովի գործունեությունը ֆինանսավորվում է պետական բյուջեից: Բյուջեում առանձին տողով նշվում է այդ մասին:~~

~~2. Յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասում Ազգային հանձնաժողովի համար նախատեսվում են նախորդ տարվա պետական բյուջեով հաստատվածից ոչ պակաս հատկացումներ: Այդ հատկացումները պետք է ապահովեն օրենքով ամրագրված՝ Ազգային հանձնաժողովի լիազորությունների իրականացումը:~~

~~3. Ազգային հանձնաժողովը յուրաքանչյուր տարի կազմում է հաջորդ տարվա իր ծախսերի նախահաշիվը (բյուջեն) և ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարություն, որը տվյալ տարվա պետական բյուջեի կազմում ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հաստատմանը:~~

-

~~Հոդված 43.~~ ~~Ազգային հանձնաժողովի հաղորդումը~~

-

~~1. Ազգային հանձնաժողովը մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով է ներկայացնում Ազգային հանձնաժողովի նախորդ տարվա գործունեության մասին հաղորդում:~~

~~2. Հաղորդումը ներառում է Ազգային հանձնաժողովի գործունեությանը և լիազորություններին համապատասխան իրականացված բոլոր բաղադրիչների վերաբերյալ ամբողջական տեղեկություններ և վիճակագրական տվյալներ (ներառյալ՝ հայտարարված մրցույթների, տրված լիցենզիաների, հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) ցանցով հեռարձակման լիցենզավորման համար ներկայացված ու մերժված դիմումների և դրանց հիմնավորման, բացահայտված խախտումների և դրանց նկատմամբ կիրառված պատժամիջոցների, վարչական տույժերից գանձված վճարների չափի և այլ լիազորությունների մասին):~~

~~3. Հաղորդումը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով է ներկայացնում Ազգային հանձնաժողովի նախագահը կամ նրա բացակայության դեպքում՝ տեղակալը: Հաղորդումն Ազգային ժողովում քննարկվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ընդունվում է ի գիտություն:~~

~~4. Ազգային հանձնաժողովն իր հաղորդումը հրապարակում է մամուլում, ինչպես նաև տեղադրում է Ազգային հանձնաժողովի համացանցային կայքէջում:~~

~~Ազգային հանձնաժողովի ընդունած նորմատիվ բնույթի բոլոր որոշումները հրապարակվում են մամուլում:~~

-

~~Հոդված 44.~~ ~~Ազգային հանձնաժողովի գործունեության կարգը~~

-

~~1. Ազգային հանձնաժողովի աշխատանքները կազմակերպում և գործունեությունը ղեկավարում է Ազգային հանձնաժողովի նախագահը, նրա բացակայության դեպքում՝ տեղակալը:~~

~~2. Ազգային հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի և աշխատանքային քննարկումների միջոցով:~~

~~3. Ազգային հանձնաժողովի նիստերը գումարվում են հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ՝ ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ: Ազգային հանձնաժողովի նիստերը դռնբաց են: Դռնփակ նիստեր անցկացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում:~~

~~Նիստին հրավիրված անձի պահանջով քննարկումը կարող է կատարվել դռնփակ, եթե հարցերի քննարկման ժամանակ բացահայտվելու են առևտրային գաղտնիք պարունակող տեղեկություններ:~~

~~4. Ազգային հանձնաժողովի արտահերթ նիստերը հրավիրում է հանձնաժողովի նախագահը՝ իր նախաձեռնությամբ կամ առնվազն 4 անդամի պահանջով:~~

~~5. Ազգային հանձնաժողովը զանգվածային լրատվության առնվազն մեկ միջոցով հրապարակում է նիստերի անցկացման տեղը, ժամանակը և օրակարգը, հրավիրում է շահագրգիռ անձանց՝ մասնակցելու նիստերին:~~

~~6. Ազգային հանձնաժողովի նիստին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել Ազգային հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը:~~

~~7. Ազգային հանձնաժողովի նիստը վարում է Ազգային հանձնաժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ տեղակալը: Նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է Ազգային հանձնաժողովի անդամների կեսից ավելին:~~

~~8. Ազգային հանձնաժողովի նախագահի և նախագահի տեղակալի բացակայության, ինչպես նաև նրանց կողմից իրենց պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նիստը վարում է Ազգային հանձնաժողովի տարիքով ավագ անդամը:~~

~~Ազգային հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, բացի օրենքով նախատեսված դեպքերից, Ազգային հանձնաժողովի նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Ազգային հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:~~

~~Ազգային հանձնաժողովի որոշման վերաբերյալ հանձնաժողովի անդամի հատուկ կարծիքը կցվում է նիստի արձանագրությանը:~~

~~9. Լիցենզավորման մրցույթում հաղթող ճանաչելու, տրված լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու, սույն օրենքը խախտելու համար տույժեր կիրառելու, ինչպես նաև հեռարձակողների գործունեությանն առնչվող ցանկացած որոշում Ազգային հանձնաժողովը կայացնում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների երկու երրորդով:~~

~~10. Ազգային հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Նիստերի արձանագրությունները ստորագրում է նիստը նախագահողը: Ազգային հանձնաժողովը վարում է իր որոշումների գրանցամատյանը:~~

-

~~**Հոդված 45. Ազգային հանձնաժողովի աշխատակազմը**~~

-

~~1. Ազգային հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է աշխատակազմի միջոցով: Աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների քանակը և կանոնադրությունը հաստատում է Ազգային հանձնաժողովը՝ իր նախագահի ներկայացմամբ: Ազգային հանձնաժողովի աշխատակազմում չեն կարող ընդգրկվել սույն օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 5-րդ կետերով նախատեսված անձինք:~~

Գ Լ ՈՒ Խ 4

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 26. Հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության կարգավիճակը և գործունեության սկզբունքները

1. Հանրային հեռուստաընկերությունը և հանրային ռադիոընկերությունը ղեկավարվում են օբյեկտիվության, ժողովրդավարության, անկողմնակալության, բազմազանության, բազմակարծության սկզբունքներով և ապահովում են կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի, խղճի, մտքի և կրոնի, ինչպես նաև ստեղծագործության ազատությունը:

2. Հանրային հեռուստաընկերությունը և հանրային ռադիոընկերությունը պարտավոր են՝

1) ապահովել հեռարձակվող տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանությունը.

2) օրվա եթերաժամի առնվազն երկու երրորդը հատկացնել հայրենական արտադրության հաղորդումներին.

3) մշակել և իրականացնել ծրագրային քաղաքականություն՝

ա. հասարակական առավել հնչեղություն ունեցող տեղեկատվության հեռարձակման համար օգտագործել ամենահարմար եթերային ժամանակը՝ ներկայացնելով խնդրի կամ հարցի վերաբերյալ պաշտոնական հաղորդագրությունը (տեղեկատվությունը), կարծիքների բազմազանությունը,

բ. հեռուստառադիոլսարանին մատուցել այնպիսի հաղորդաշարեր և հաղորդումների տեսակներ, որոնցում ներկայացվում են Հայաստանի Հանրապետության տարբեր տարածաշրջանների, ազգային փոքրամասնությունների, հասարակության տարբեր շերտերի ու սոցիալական խմբերի շահերը,

գ. հեռուստառադիոլսարանին մատուցել այնպիսի հաղորդաշարեր և հաղորդումներ, որոնք ուղղված են բնակչության իրավագիտակցության բարձրացմանը, աշխարհաքաղաքական իրադարձությունների մասին բնակչությանը համալիր տեղեկատվության տրամադրմանը, Հայաստանի Հանրապետությունում աղետների կառավարմանը և նվազեցմանը,

դ. եթերային ժամանակ տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների կյանքի, մշակույթի, այդ թվում՝ իրենց լեզուների մասին հաղորդումների հեռարձակման համար:

3. Հանրային հեռուստաընկերությունում և հանրային ռադիոընկերությունում Հանրապետության նախագահի, վարչապետի, Ազգային ժողովի, Կառավարության պաշտոնական հաղորդագրությունների (տեղեկատվության) տևողությունը չի սահմանափակվում:

4. Հանրային հեռուստատեսությամբ արգելվում է ցուցադրել գովազդ, բացառությամբ սոցիալական գովազդի, ինչպես նաև մշակութային, ուսումնական, գիտակրթական և սպորտային հեռուստահաղորդումների ցուցադրման ժամանակ հովանավորների մասին սույն օրենքին համապատասխան տեղեկություններ նշելու դեպքերի, բայց ոչ ավել, քան մեկ հովանավոր յուրաքանչյուր մշակութային, ուսումնական, գիտակրթական և սպորտային հեռուստահաղորդման ցուցադրման ժամանակ: Հանրային հեռուստատեսությամբ ցուցադրվող սոցիալական գովազդի,

ինչպես նաև մշակութային, ուսումնական, գիտակրթական և սպորտային հեռուստահաղորդումների ցուցադրման ժամանակ հովանավորների մասին հիշատակումը չպետք է գերազանցի հաղորդման տևողության 2.5 տոկոսը:

5. Սույն հոդվածի 4-րդ մասի դրույթները չեն տարածվում հանրային հեռուստատեսության արբանյակային կապով եթերի հեռարձակումների, ինչպես նաև հանրային հեռուստատեսությամբ միջազգային հեղինակավոր մշակութային կամ սպորտային իրադարձությունների այն վերահեռարձակումների վրա, որոնց շրջանակներում դրանց կազմակերպիչների պահանջով պարտադիր պետք է ցուցադրվեն գովազդներ:

6. Հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության աշխատակիցների գործադուլի ժամանակ վերջիններս պարտավոր են ապահովել լրատվական հաղորդումների օրական առնվազն երկու թողարկում՝ առավոտյան և երեկոյան:

7. Հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության կանոնադրությունները հաստատում է Խորհուրդը:

8. Հանրային հեռուստաընկերությունը և հանրային ռադիոընկերությունը տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վիճակի վերաբերյալ հաշվետվություն են ներկայացնում Հանձնաժողովին:

9. Հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության կողմից հաշվետվության ներկայացման կարգը և հաշվետվության ձևը սահմանվում է Հանձնաժողովի որոշմամբ:

10. Հանրային հեռուստաընկերությունը և հանրային ռադիոընկերությունը գործում են սույն օրենքին, իրենց կանոնադրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:

11. Հանրային հեռուստաընկերությամբ և հանրային ռադիոընկերությամբ հեռարձակման ենթակա պաշտոնական հաղորդագրության (տեղեկատվության) արտադրությունն իրականացնում է այդ հաղորդագրությունը (տեղեկատվությունը) ներկայացնող մարմնի աշխատակազմը (ստորաբաժանումը) կամ այդ մարմնի

համաձայնությամբ՝ հանրային հեռուստաընկերությունը կամ հանրային ռադիոընկերությունը կամ այլ հեռուստառադիոընկերություններ:

Հոդված 27. Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը

1. Հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության կառավարման մարմինը Խորհուրդն է:

2. Խորհուրդը բաղկացած է հինգ անդամից՝ Խորհրդի նախագահ և Խորհրդի 4 անդամ: Խորհրդում պետք է ապահովվի սեռային ներկայացվածությունը:

3. Խորհրդի անդամները նշանակվում են մրցութային կարգով վարչապետի կողմից վեց տարի ժամկետով:

4. Խորհրդի անդամները պետք է լինեն լրագրության, հեռուս-տառադիոհեռարձակման կառավարման բնագավառի, գիտության, մշակույթի և ար-վեստի հեղինակավոր գործիչներ, ունենան բարձրագույն կրթություն և տիրապետեն հայոց լեզվին:

5. Խորհրդի անդամ չի կարող լինել՝

1) օտարերկրյա քաղաքացին և քաղաքացիություն չունեցող անձը.

2) դատարանի վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձը.

3) անձը, ով դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ:

6. Խորհրդի անդամ նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, Խորհրդի անդամը պարտավոր է՝

1) դադարեցնել ձեռնարկատիրական կամ քաղաքական գործունեությամբ զբաղվելը.

2) ազատվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, կուսակցության ղեկավար մարմնում, ինչպես նաև առևտրային կազմակերպություններում զբաղեցրած պաշտոններից.

3) ազատվել վճարովի հիմունքներով աշխատանքից, բացառությամբ գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանքի:

Հոդված 28. Խորհրդի գործունեության կարգը

1.Խորհուրդը գործում է սույն օրենքի, այլ օրենքների և իր կողմից հաստատված կանոնակարգի համաձայն:

2. Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է ամենօրյա գործունեության և հրավիրվող հերթական ու արտահերթ նիստերի միջոցով: Խորհրդի հերթական նիստերը գումարում է Խորհրդի նախագահը՝ ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ:

3. Խորհրդի նախագահի բացակայության, ինչպես նաև նրա կողմից իր պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նիստը վարում է նրան փոխարինող Խորհրդի անդամը, իսկ նրա բացակայության դեպքում՝ Խորհրդի տարիքով ավագ անդամը:

4. Խորհրդի արտահերթ նիստը հրավիրում է Խորհրդի նախագահը՝

1) իր նախաձեռնությամբ.

2) Խորհրդի առնվազն երկու անդամի պահանջով:

5. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է Խորհրդի անդամների կեսից ավելին:

6. Խորհրդի որոշումներն ընդունվում են՝ Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

7. Խորհրդի նիստերն արձանագրվում են:

8. Խորհուրդն ապահովում է իր գործունեության հրապարակայնությունը: Խորհուրդն իր գործունեության, ընդունած որոշումների և ծրագրերի մասին պարբերաբար տեղեկատվություն է տրամադրում զանգվածային լրատվության միջոցներին և հրապարակում իր պաշտոնական կայքում:

9. Խորհրդի նախագահի աշխատավարձի հաշվարկման գործակիցը 9 է, իսկ Խորհրդի անդամները՝ 5.25: Խորհրդի նախագահի և Խորհրդի անդամների աշխատավարձը որոշվում է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բազային աշխատավարձ սույն մասում նշված գործակիցներով բազմապատկելու միջոցով:

Հոդված 29. Խորհրդի անդամների նշանակման կարգը և լիազորությունների դադարումը

1. Խորհրդի անդամի թափուր տեղի համալրման մրցույթն անցկացնելու նպատակով Հանձնաժողովը ձևավորում է 5 անդամից, ներառյալ նախագահը, բաղկացած մրցութային հանձնաժողով:

2. Մրցութային հանձնաժողովի նախագահը և անդամները ընտրվում են 6 տարի ժամկետով:

3. Մրցութային հանձնաժողովի անդամ կարող են լինել լրագրության, հեռուստառադիոհեռարձակման կառավարման բնագավառի, գիտության, մշակույթի և արվեստի հեղինակավոր գործիչներ, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

4. Մրցութային հանձնաժողովի անդամների ընտրության կարգը սահմանում է Հանձնաժողովը:

5. Մրցութային հանձնաժողովի ընթացիկ գործունեությունը սպասարկում է Հանձնաժողովի աշխատակազմը:

6. Մրցութային հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Մրցութային հանձնաժողովի նիստերը հրավիրում և վարում է մրցութային հանձնաժողովի նախագահը, իսկ դրա անհնարինության դեպքում մրցութային հանձնաժողովի տարիքով ավագ անդամը:

7. Մրցութային հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է նրա անդամների կեսից ավելին:

8. Մրցութային հանձնաժողովի անդամները գործում են հասարակական հիմունքներով: Մրցութային հանձնաժողովի անդամները ստանում եմ փոխհատուցում որպես մրցութային հանձնաժողովի անդամ կատարած ծախսերի համար: Փոխհատուցման չափը և կարգը սահմանում է վարչապետը:

9. Խորհրդի անդամի թափուր տեղի առկայության դեպքում Խորհրդի նախագահը, իսկ Խորհրդի նախագահի թափուր տեղի առկայության դեպքում Խորհրդի տարիքով ավագ անդամը այդ մասին գրավոր տեղեկացնում են մրցութային հանձնաժողովի նախագահին:

10. Խորհրդի անդամի թափուր տեղի վերաբերյալ գրավոր տեղեկատվությունն ստացվելուց հետո մրցութային հանձնաժողովը մեկշաբաթյա ժամկետում հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, ինչպես նաև Կառավարության պաշտոնական կայքում հայտարարություն է տարածում թափուր տեղի համալրման համար մրցույթի անցկացման վերաբերյալ:

11. Հայտարարության մեջ նշվում են՝

1) թափուր պաշտոնի անվանումը,

2) թափուր պաշտոնին ներկայացվող պահանջները,

3) մրցույթին մասնակցելու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դրանք ներկայացնելու վայրը, ժամկետը, մրցույթի անցկացման օրը և ժամը:

12. Մրցույթն անցկացվում է նաև այն դեպքում, երբ դրան մասնակցելու համար դիմել է մեկ մասնակից:

13. Եթե մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել կամ մրցույթի արդյունքում հաղթող չի ճանաչվել, ապա մրցույթը համարվում է չկայացած և անցկացվում է կրկնակի մրցույթ:

14. Կրկնակի մրցույթն անցկացվում է ընդհանուր հիմունքներով՝ սույն հոդվածով սահմանված կարգով:

15. Փաստաթղթերը ներկայացվում են վարչապետի աշխատակազմ մրցույթի անցկացման մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող 10 օրվա ընթացքում: Նշված ժամկետից հետո ներկայացված փաստաթղթերը Հանձնաժողովի կողմից չեն քննարկվում:

16. Մրցույթի արդյունքներով հաղթողին որոշելու նպատակով Հանձնաժողովի նիստը հրավիրվում է փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետի ավարտից հետո 10 օրվա ընթացքում:

17. Մրցութային հանձնաժողովի նիստի մասին մրցութային հանձնաժողովի անդամներին նիստից առնվազն մեկ օր առաջ ծանուցում է վարչապետի աշխատակազմը:

18. Մրցութային հանձնաժողովը, ուսումնասիրելով մրցույթի մասնակիցների վերաբերյալ փաստաթղթերը, որոշում է մրցույթի հաղթողին: Անհրաժեշտության

դեպքում, մինչև մրցույթի հաղթողի վերաբերյալ որոշում կայացնելը, մրցութային հանձնաժողովը կարող է թեկնածուի հետ անցկացնել հարցազրույց:

19. Մրցութային հանձնաժողովի նախագահի հրավերով նիստերին կարող են մասնակցել հեռուստատեսության և ռադիոյի ոլորտի մասնագետներ:

20. Մրցութային հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նրա անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Մրցութային հանձնաժողովի անդամները քվեարկում են միայն «կողմ» կամ «դեմ»:

21. Մրցույթի արդյունքում մրցութային հանձնաժողովն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) մրցույթը չկայացած համարելու և կրկնակի մրցույթ անցկացնելու մասին.

2) մրցույթում հաղթող ճանաչելու մասին:

22. Մրցութային հանձնաժողովը մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչում մեկ մասնակցի:

23. Մրցութային հանձնաժողովի կողմից մրցույթում հաղթող ճանաչելու մասին որոշումն ընդունելուց հետո եռօրյա ժամկետում վարչապետը Խորհրդի անդամ է նշանակում մրցույթում հաղթած մասնակցին:

24. Առաջին կրկնակի մրցույթը չկայացած համարվելու դեպքում, մինչև մրցութային հանձնաժողովի կողմից կրկնակի մրցույթների արդյունքում հաղթող ճանաչելը, վարչապետը տասնօրյա ժամկետում նշանակում է Խորհրդի անդամի ժամանակավոր պաշտոնակատար, ով պետք է բավարարի Խորհրդի անդամին սույն օրենքով ներկայացվող պահանջներին:

25. Մրցույթի համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և դրանց ներկայացման կարգը սահմանում է Հանձնաժողովը:

26. Մրցութային հանձնաժողովի նիստերի նախապատրաստումը, արձանագրումը, ինչպես նաև ընդունված որոշումների առաքումն ապահովում է Հանձնաժողովի աշխատակազմը:

27. Խորհրդի անդամները նախքան պաշտոնավարման ժամկետը լրանալը չեն կարող հետ կանչվել իրենց պաշտոններից, բացառությամբ այն դեպքերի, երբ Խոր-հրդի անդամը՝

1) հրաժարական է տվել.

2) ընտրվել կամ նշանակվել է որևէ պաշտոնում.

3) վերջին մեկ տարվա ընթացքում անհարգելի պատճառով չի մասնակցել Խորհրդի՝ երկու անընդմեջ կամ ընդհանուր առմամբ երեք նիստերին.

4) նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ.

5) կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կամ ձեռք է բերել այլ պետության քաղաքացիություն.

6) մահացել է.

7) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

8) չի կատարել սույն օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված պարտականությունը:

Հոդված 30. Խորհրդի նախագահը

1. Խորհրդի նախագահը՝

1) կազմակերպում է Խորհրդի և նրա աշխատակազմի գործունեությունը.

2) գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք, ստորագրում է Խորհրդի ընդունած որոշումները և նիստերի արձանագրությունները.

3) վերահսկում է Խորհրդի որոշումների կատարումը.

4) ընդունում և ազատում է Խորհրդի աշխատակազմի աշխատողներին

5) համակարգում և ապահովում է Խորհրդի բնականոն աշխատանքը:

2. Խորհրդի նախագահի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նրա փոխարինում է Խորհրդի նախագահի կողմից որպես փոխարինող նշանակված Խորհրդի անդամը, իսկ եթե Խորհրդի նախագահը փոխարինող չի նշանակել, ապա Խորհրդի տարիքով ավագ անդամը:

Հոդված 31. Խորհրդի իրավասությունները

1. Խորհուրդը՝

1) սահմանում է հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով հաղորդումների հեռարձակման ընդհանուր ծավալը և հեռուստառադիոծրագրերի (հեռուստաալիքների) թիվը, որը չի կարող պակաս լինել չորսից՝ երկու հեռուստածրագիր և երկու ռադիոծրագիր, առնվազն մեկը ընդհանուր, մյուսը՝ հոգևոր-մշակութային ուղղվածության.

2) սահմանում է հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության ֆինանսական միջոցների օգտագործման կարգը և ուղղությունները.

3) հաստատում է հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության աշխատողների հաստիքացուցակը, պաշտոնները, նրանց հետ կնքվող պայմանագրերի ձևերը, պայմանները և վարձատրման կարգը.

4) սահմանում է հանրային հեռուսստաընկերության և հանրային ռադիոընկերության այն պաշտոնների ցանկը, որոնք զբաղեցնողներն իրավունք չունեն աշխատելու այլ հեռուստաընկերություններում և ռադիոընկերություններում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներում.

5) սահմանում է հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության գործադիր տնօրենների թափուր տեղերի համալրման համար մրցույթի անցկացման կարգը.

6) նշանակում և պաշտոնից ազատում է հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության մրցույթում հաղթող ճանաչված գործադիր տնօրենին:

7) հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության գործադիր տնօրենների ներկայացմամբ նշանակում է գործադիր տնօրենների տեղակալներին:

8) յուրաքանչյուր տարի մինչև հունվարի 20-ը լսում է հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության նախորդ տարվա գործունեության մասին գործադիր տնօրենների հաշվետվությունները.

9) հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության տնօրենների ներկայացմամբ պարբերաբար հաստատում է ծրագրային քաղաքականությունը.

10) հաստատում է իր կանոնադրությունը և հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության կառուցվածքը.

11)հաստատում է Խորհրդի աշխատակազմի կառուցվածքը և հաստիքացուցակը.

12) հաստատում է հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության լրագրողների մասնագիտական վարքագծի կանոնները

13) ստացված բողոքների հիման վրա, կամ իր նախաձեռնությամբ ուսումնասիրում է լրագրողների մասնագիտական վարքագծի կանոնները խախտման դեպքերը եւ ընդունում է խորհրդատվական բնույթի եզրակացություն.

14) առնվազն տարին երկու անգամ կազմակերպում է հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության գործունեության վերաբերյալ հասարական կարծիքի ուսումնասիրություններ ու հրապարակում դրանց արդյունքները.

15) իրականացնում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով իրեն վերապահված այլ իրավասություններ:

2. Խորհրդի որոշումներն իրենց իրավասության շրջանակներում կատարվում են հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության գործադիր տնօրենների կողմից:

3. Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է աշխատակազմի միջոցով: Խորհրդի աշխատակազմը «Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի աշխատակազմ» պետական հիմնարկն է:

Հոդված 32. Հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության գործադիր տնօրենների իրավասությունները

1. Հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության գործադիր տնօրենները՝

1) ղեկավարում են հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության ընթացիկ գործունեությունը.

2) Խորհրդի հաստատմանն են ներկայացնում ծրագրերի կառուցվածքը, դրանց առանձին բաժինների համամասնությունները, հաղորդացանցը.

3) նշանակում և ազատում են հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին.

4) ընդունում են հրամաններ.

5) կնքում են պայմանագրեր և վերահսկում դրանց կատարումը.

6) մասնակցում են Խորհրդի աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով.

7) Հայաստանի Հանրապետությունում, օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում ներկայացնում են հանրային հեռուստաընկերությունը և հանրային ռադիոընկերությունը,

8) իրենց իրավասության սահմաններում առանց լիազորագրի հանդես են գալիս հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության անունից և ներկայացնում են նրանց շահերը,

9) օրենքով, այլ իրավական ակտերով և հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում են հանրային հեռուստաընկերությանը և հանրային ռադիոընկերությանը պատկանող գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

10) տալիս են հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

11) նշանակում և ազատում են հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում են խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

12) Խորհրդի հաստատմանն են ներկայացնում հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության տարեկան հաշվետվությունները.

13) ապահովում են աշխատողների մասնագիտական կատարելագործումը.

14) իրականացնում են օրենքով, իրավական այլ ակտերով և հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավասություններ:

2. Հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության մրցույթում հաղթող ճանաչված գործադիր տնօրենները նշանակվում և ազատվում են Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ մինչև 5 տարի ժամկետով:

3. Հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության գործադիր տնօրենների բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքերում նրանց փոխարինում և նրանց լիազորություններն իրականացնում են հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության գործադիր տնօրենների տեղակալները:

4. Գործադիր տնօրենների տեղակալները նշանակվում են Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Հոդված 33. Հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության ֆինանսավորումը

1. Խորհուրդը «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետում յուրաքանչյուր տարի կազմում և պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության լիազորված պետական կառավարման համակարգի մարմին է ներկայացնում հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտերը՝ առանձին նշելով Խորհրդին, հանրային հեռուստաընկերությանը և հանրային ռադիոընկերությանը հատկացվելիք գումարները, առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծում ներառելու համար:

2. Հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության հաջորդ տարվա ծախսերի նախահաշիվը հաստատում է Խորհուրդը՝ հանրային հե-ռուստաընկերության և հանրային ռադիոընկերության գործադիր տնօրենների ներկայացմամբ:

Հոդված 34. Հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության տարեկան հաղորդումը

1. Խորհուրդը մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը հրապարակում է հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության նախորդ տարվա գործունեության վերաբերյալ հաղորդում:

2. Հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության հաղորդումը հրապարակվում է մամուլում, ինչպես նաև տեղադրվում է Խորհրդի պաշտոնական կայքում:

Գ Լ ՈՒ Խ 5

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Հոդված 35. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

1. Սահմանադրության 196-րդ հոդվածի համաձայն՝ Հանձնաժողովը անկախ պետական մարմին է, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում է հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների գործունեությունը:

2. Հանձնաժողովն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանով և իր անվանմամբ կնիք, դրոշմակնիք, ձևաթուղթ և անհատականացման այլ միջոցներ:

3. Հանձնաժողովը օրենքով իրեն վերապահված իրավասության շրջանակներում կամ հատուկ լիազորությունների առկայության դեպքում ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունն այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում: Հանձնաժողովը կարող է համագործակցել այլ պետությունների համապատասխան կառույցների և միջազգային կազմակերպությունների հետ:

4. Հանձնաժողովի նստավայրը Երևան քաղաքն է: Իր որոշմամբ Հանձնաժողովը կարող է արտագնա նիստեր գումարել նաև այլ համայնքներում:

Հոդված 36. Հանձնաժողովի լիազորությունները

1. Հանձնաժողովը՝

1) հրապարակային և մրցութային կարգով հատկացնում է վերգետնյա եթերային հաճախություններ.

2) իրականացնում է հեռուստառադիոհեռարձակողների վերգետնյա եթերային հեռարձակման լիցենզավորումը մրցույթի միջոցով և ապահովում մրցույթի արդյունքների մասին ամբողջական տեղեկատվության հրապարակումը.

3) իրականացնում է հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) ցանցով հեռարձակման լիցենզավորումը.

4) իրականացնում է հեռուստառադիոծրագրերի վերահեռարձակման լիցենզավորումը.

5) անցկացնում է մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզավորման մրցույթ և տրամադրում է մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզիա.

6) սահմանում է թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռարձակելու համար հեռուստաընկերությունների, մրցույթի անցկացման կարգը, մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզավորման մրցույթի կազմակերպման առանձնահատկությունները.

7) հաստատում է լիցենզիայի ձևերը.

8) տրամադրում է լիցենզիաներ.

9) տարին մեկ հրապարակում է վերգետնյա եթերային հաճախականությունների ամբողջական ցանկը՝ հիմք ընդունելով լիազորված պետական կառավարման մարմնի կազմած և պարբերաբար իրեն տրամադրվող՝ Հայաստանի Հանրապետության տարածքում հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման համար նախատեսված վերգետնյա եթերային հաճախությունների ցանկը.

10) կազմում և հրապարակում է լիցենզավորված անձանց ցուցակը, հսկողություն է իրականացնում լիցենզիայում նշված պայմանների կատարման նկատմամբ.

11) թույլատրում է հեռուստառադիոընկերությունների կողմից բաժանորդային հեռարձակումը.

12) հեռուստառադիոհաղորդումների տեսագրությունների և ձայնագրությունների ընտրանքային դիտարկման միջոցով պարզում է դրանց համապատասխանությունը օրենսդրության և լիցենզիայի պահանջներին.

13) վերահսկում է հեռուստառադիոհաղորդումների պատրաստման տեխնիկական չափանիշների, ինչպես նաև տեխնիկական միջոցների համապատասխանությունը գործող ստանդարտներին և տրված հավաստագրին.

14) սույն օրենքի խախտման կամ լիցենզիայի պայմանները կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ.

15) վերահսկում է հեռուստաընկերության և ռադիոընկերության կողմից նախընտրական քարոզչության «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված կարգի պահպանումը.

16) նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտումներ հայտնաբերելու դեպքում դիմում է դատարան՝ տվյալ հեռուստառադիոընկերությանը օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու հայցով.

17) ուսումնասիրում և պատասխանում կամ եզրակացություն է տալիս հեռուստառադիոընկերությունների գործունեության վերաբերյալ բողոքներին, առաջարկություններին և հարցումներին.

18) իրականացնում է հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկում.

19) կարող է ներգրավվել հեռուստատեսության և ռադիոյի բնագավառին առնչվող միջազգային պայմանագրերի և իրավական ակտերի նախագծերի մշակմանը.

20) «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դեպքերում իրականացնում է ստուգումներ և ուսումնասիրություններ.

21) ուսումնասիրություն է իրականացնում հանրային հեռուստատեսությունում և ռադիոյում տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վերաբերյալ.

22) սահմանում է հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության կողմից սույն օրենքի 26-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված հաշվետության ներկայացման կարգը և ձևը.

23) սահմանում է ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելու ժամանակ վարչապետին կամ վարչապետի կողմից լիազորված Կառավարության այլ անդամին եթերաժամանակ հատկացնելու կարգը և պայմանները.

24) սահմանում է հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների կյանքի, մշակույթի, այդ թվում՝ իրենց լեզուների մասին հաղորդումների հեռարձակման համար տրամադրվող եթերային ժամանակի նվազագույն ժամաքանակները.

25) սահմանում է մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության ձևը.

26) օրենքով սահմանված կարգով ձևավորում է իր աշխատակազմը:

2. Հանձնաժողովն իրավասու մարմիններից, հանրային հեռուստաընկերությունից և հանրային ռադիոընկերությունից, այլ կազմակերպություններից և պաշտոնատար անձանցից պահանջում և ստանում է անհրաժեշտ փաստաթղթեր և այլ տեղեկատվություն:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով նախատեսված ուսումնասիրության իրականացման ընթացքում թերություններ հայտնաբերելու դեպքում Հանձնաժողովն իրավասու է հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերությանը հանձնարարել սահմանված ժամկետում վերացնել հայտնաբերված թերությունները:

4. Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետում թերությունները չվերացնելու դեպքում Հանձնաժողովն իրավասու է դիմել Խորհրդին հանրային հեռուստաընկերության կամ հանրային ռադիոընկերության գործադիր տնօրենի հետագա պաշտոնավարման հարցը լուծելու առաջարկով:

5. Հանձնաժողովն իր լիազորություններն իրականացնելիս կարող է հասարակական կամ պայմանագրային հիմունքներով ներգրավել մասնագետների և փորձագետների:

6. Սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ, 7-րդ, 22-24-րդ, սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ, 13-րդ հոդվածի 3-րդ մասով, 46-րդ հոդվածի 2-րդ, 49-րդ հոդվածի 3-րդ և 50-

ոդ հոդվածի 4-րդ մասերով նախատեսված լիազորություններն իրականացնելիս Հանձնաժողովն ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

Հոդված 37. Հանձնաժողովի գործունեության սկզբունքները

1. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է օրինականության, ժողովրդավարության, հավասարության, անաչառության, ինքնուրույնության, կոլեգիալության և հրապարակայնության սկզբունքների հիման վրա:

Հոդված 38. Հանձնաժողովի անդամների թեկնածուներին և անդամներին ներկայացվող պահանջները և նրանց վարձատրության կարգը

1. Հանձնաժողովի անդամի թեկնածու կարող է լինել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք, որն ունի լրագրության, հեռուստատեսության և ռադիոյի, տնտեսության, կառավարման, ճարտարագիտության, մշակույթի, արվեստի կամ իրավագիտության առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային փորձառություն, բարձրագույն կրթություն, հանդիսանում է զանգվածային լրատվության բնագավառում հեղինակավոր մասնագետ:

2. Հանձնաժողովի անդամ չի կարող լինել՝

1) անձը, ով դատապարտվել է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

2) դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձը,

3. Սահմանադրության 197-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամներն իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ որևէ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հրապարակային ելույթներում նրանք պետք է ցուցաբերեն քաղաքական

զսպվածություն: Հանձնաժողովի անդամները ընտրություններին և հանրաքվեներին մասնակցում են միայն որպես ընտրող:

4. Հանձնաժողովի անդամները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

5. Հանձնաժողովի անդամի լիազորությունները ստանձնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, Հանձնաժողովի անդամը պարտավոր է՝

1) դադարեցնել ձեռնարկատիրական կամ քաղաքական գործունեությամբ զբաղվելը.

2) ազատվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև առևտրային կազմակերպություններում զբաղեցրած պաշտոններից.

3) ազատվել վճարովի հիմունքներով աշխատանքից, բացառությամբ գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանքի:

6. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ իր պաշտոնն ստանձնելիս տալիս է հետևյալ երդումը.

«Ստանձնելով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամի պարտականությունները՝ երդվում եմ, հավատարիմ լինելով Սահմանադրությանը և օրենքներին, պաշտպանել մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, աջակցել քաղաքացիական հասարակության ձևավորմանը՝ կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի, տեղեկատվության ազատության և բազմակարծության ապահովման միջոցով:

Երդվում եմ, որ պարտականություններս կկատարեմ անաչառ, առավելագույն բարեխղճությամբ և ազնվությամբ, կգործեմ հրապարակայնության, անկողմնակալության և արդարության սկզբունքով՝ անկախ որևէ քաղաքական կամ տնտեսական շահից:»:

7. Հանձնաժողովի անդամների վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Հոդված 39. Հանձնաժողովի կազմավորման կարգը

1. Սահմանադրության 197-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ Հանձնաժողովը բաղկացած է յոթ անդամից: Հանձնաժողովի անդամներին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով:

2. Հանձնաժողովի անդամի լիազորությունների ավարտման օրվանից ոչ շուտ, քան մեկ ամիս առաջ և ոչ ուշ, քան մեկ շաբաթ առաջ, իսկ այլ հիմքով թափուր տեղ առաջանալու դեպքում՝ թափուր տեղն առաջանալուց հետո եռօրյա ժամկետում Հանձնաժողովի նախագահը, իսկ Հանձնաժողովի նախագահի թափուր տեղ առաջանալու դեպքում Հանձնաժողովի նախագահին փոխարինող անդամը այդ մասին գրավոր տեղեկացնում է Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովին:

3. Ազգային ժողովը Հանձնաժողովի անդամի ընտրությունը կատարում է Սահմանադրությամբ և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով:

4. Հանձնաժողովն իր կազմից ընտրում է Հանձնաժողովի նախագահ: Հանձնաժողովի անդամը կարող է առաջադրվել որպես Հանձնաժողովի նախագահ ինքնաառաջադրման կամ Հանձնաժողովի որևէ այլ անդամի կողմից իր համաձայնությամբ առաջադրվելու եղանակով:

5. Հանձնաժողովի նախագահի ընտրության համար գաղտնի քվեարկվում են Հանձնաժողովի բոլոր անդամները:

6. Քվեարկության համար կազմվում է քվեաթերթիկ, որում ներառվում են բոլոր թեկնածուները:

7. Քվեարկելիս Հանձնաժողովի անդամն ունի մեկ ձայն: Եթե քվեարկության մասնակիցն ավելի ձայն է տվել, ապա այդ քվեաթերթիկը համարվում է անվավեր:

8. Եթե քվեարկության արդյունքով որևէ թեկնածու չի ստացել ձայների կեսից ավելին, ապա անցկացվում է լրացուցիչ քվեարկություն, որին մասնակցում են առավել ձայներ ստացած երկու թեկնածուները:

9. Եթե ձայների հավասարության պատճառով հնարավոր չէ որոշել առավել ձայներ ստացած երկու թեկնածուներին, ապա նախապատվությունը տրվում է մասնագիտական աշխատանքի առավել երկար փորձառություն ունեցող թեկնածուին, իսկ փորձառության հավասարության դեպքում՝ տարիքով ավագին:

10. Լրացուցիչ քվեարկության ժամանակ Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Լրացուցիչ քվեարկության ժամանակ ձայների թվի կեսից ավելի ստացած թեկնածուն համարվում է ընտրված: Եթե ոչ մեկը չի ստացել քվեարկության մասնակիցների առնվազն կեսից ավելի «կողմ» ձայներ, ապա անցկացվում է նոր ընտրություն:

11. Հանձնաժողովի նախագահն ընտրվում է Հանձնաժողովների անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Հանձնաժողովի անդամն իրավունք չունի հրաժարվելու քվեարկությունից և քվեարկում է միայն «կողմ» կամ «դեմ»:

12. Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Հանձնաժողովի անդամ, ներառյալ Հանձնաժողովի նախագահ:

13. Հանձնաժողովի նախագահն ընտրվում է մինչև Հանձնաժողովի անդամ իր պաշտոնավարման ժամկետի ավարտը:

14. Հանձնաժողովի նոր նախագահի ընտրությունը կատարվում է Հանձնաժողովի անդամների կազմը համալրվելուց հետո տասնօրյա ժամկետում:

Հոդված 40. Հանձնաժողովի նախագահը

1. Հանձնաժողովի նախագահը՝

1) ապահովում է Հանձնաժողովի բնականոն գործունեության կազմակերպումը.

2) ներկայացնում է Հանձնաժողովն այլ մարմինների հետ հարաբերություններում.

3) ձևավորում է նիստերի օրակարգը, հրավիրում և վարում է Հանձնաժողովի նիստերը, ընդ որում՝ Հանձնաժողովի անդամը մասնակցում է Հանձնաժողովի նիստերի օրակարգի ձևավորմանը օրակարգի վերաբերյալ Հանձնաժողովի նախագահին առաջարկություններ ներկայացնելու միջոցով.

4) ստորագրում և հրապարակում է Հանձնաժողովի որոշումները, արձակում է հրամաններ.

5) վերահսկում է Հանձնաժողովի ընդունած որոշումների կատարումը.

6) Հանձնաժողովի նախորդ տարվա գործունեության մասին հաղորդումը ներկայացնում է Ազգային ժողով.

7) իրականացնում է աշխատակազմի ընդհանուր ղեկավարումը.

8) Հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում աշխատակազմի կանոնադրության նախագիծը, կառուցվածքը և հաստիքացուցակը.

9) օրենքով սահմանված կարգով նշանակում և ազատում է Հանձնաժողովի աշխատակիցներին.

10) իրականացնում է օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

2. Արձակուրդի կամ գործուղման դեպքում Հանձնաժողովի նախագահի լիազորությունները ժամանակավորապես կատարում է նրա կողմից նշանակված Հանձնաժողովի անդամը:

3. Հանձնաժողովի նախագահի կողմից արձակուրդի կամ գործուղման մեջ գտնվելու դեպքում իրեն փոխարինող չնշանակելու, ժամանակավոր անաշխատունակության, լիազորությունների դադարման կամ դադարեցման դեպքերում Հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարում է Հանձնաժողովի տարիքով ավագ անդամը:

Հոդված 41. Հանձնաժողովի անդամի լիազորությունների դադարումը և դադարեցումը

1. Հանձնաժողովի անդամը չի կարող նախքան պաշտոնավարության ժամկետը լրանալը հետ կանչվել իր պաշտոնից:

2. Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցվում են՝

1) անհամատեղելիության պահանջները խախտելու.

2) քաղաքական գործունեությամբ զբաղվելու.

3) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով ավելի քան 4 ամիս անընդմեջ կամ ավելի քան 6 ամիս օրացուցային տարվա ընթացքում իր պաշտոնական պարտականությունները կատարելու անհնարինության, բացառությամբ մայրության, երեխայի ծննդյան կամ երեխայի որդեգրման դեպքում արձակուրդում լինելու հետ կապված պատճառներով, կամ ընտրվելուց հետո իր պաշտոնում

նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու.

4) տարվա ընթացքում Հանձնաժողովի նիստերին անհարգելի պատճառով առնվազն երկու անգամ չմասնակցելու.

5) առնվազն մեկ անգամ քվեարկությունից հրաժարվելու կամ ձեռնպահ մնալու դեպքում՝ բացառությամբ սույն օրենքով նախատեսված քվեարկությանը մասնակցությունը բացառող դեպքերի.

6) առնվազն մեկ անգամ Հանձնաժողովի նիստին իր մասնակցությունը բացառող հանգամանքների մասին չհայտնելու դեպքում:

3. Հանձնաժողովի անդամի լիազորությունների դադարման դեպքերն են՝

1) լիազորությունների ժամկետն ավարտվելը.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելը կամ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելը.

3) նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը.

4) նրան անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը.

5) նրա հրաժարականը.

6) նրա մահը:

4. Հանձնաժողովի անդամի լիազորությունները սույն օրենքով սահմանված դեպքերում դադարեցնում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով:

5. Սույն հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի հիմքով Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարում են այդ հարցի համար հրավիրված Հանձնաժողովի նիստում Հանձնաժողովի անդամի կողմից իր հրաժարականը պնդելու կամ այդ նիստին չներկայանալու օրվանից:

6. Սույն հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետի հիմքով Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարում են նրա մահվան օրը:

7. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հիմքով Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարում են նրա լիազորությունները դադարելու օրը:

8. Սույն հոդվածի 3-րդ մասի 5-6-րդ կետերով նախատեսված հիմքերով

Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարելու դեպքում Հանձնաժողովի նախագահը անհապաղ հայտարարություն է տարածում Հանձնաժողովի պաշտոնական կայքում:

9. Սույն հոդվածի 3-րդ մասի 2-4-րդ կետերում նշված հիմքերով Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարում են համապատասխան հիմքի առկայությունն արձանագրող Հանձնաժողովի որոշման ընդունման օրվանից:

Հոդված 42. Հանձնաժողովի ծախսերի ֆինանսավորումը

1. Հանձնաժողովի գործունեությունը ֆինանսավորվում է պետական բյուջեից:

2. Հանձնաժողովը, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետում յուրաքանչյուր տարի կազմում և Կառավարություն է ներկայացնում Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը (ծախսերի նախահաշիվը)՝ առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծում ներառելու համար:

3. Հանձնաժողովի բյուջետային ֆինանսավորման հայտը Կառավարության կողմից ընդունվելու դեպքում՝ անփոփոխ, իսկ առարկությունների դեպքում՝ փոփոխված, ընդգրկվում է պետական բյուջեի նախագծում: Կառավարությունը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի բյուջետային ֆինանսավորման հայտը պետական բյուջեի նախագծի հետ միասին ներկայացնում է Ազգային ժողով: Կառավարությունը Ազգային ժողով է ներկայացնում նաև բյուջետային հայտի փոփոխությունների վերաբերյալ իր հիմնավորումը:

4. Հանձնաժողովի ծախսերի նախահաշիվը պետք է ապահովի սույն օրենքով սահմանված խնդիրների և գործառույթների պատշաճ իրականացման հնարավորությունը, այդ թվում՝ միջազգային կազմակերպություններում ներկայացուցչության ապահովումը, ինչպես նաև Հանձնաժողովի անդամներին աշխատավարձի վճարումը:

Հոդված 43. Հանձնաժողովի տարեկան հաղորդումը

1. Հանձնաժողովը մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը Ազգային ժողով է ներկայացնում իր նախորդ տարվա գործունեության և հեռուստատեսությունում ու ռադիոյում տեղեկատվության ազատության վիճակի մասին տարեկան հաղորդում:

2. Հաղորդումը ներառում է Հանձնաժողովի գործունեությանը և լիազորություններին համապատասխան իրականացված բոլոր բաղադրիչների վերաբերյալ ամբողջական տեղեկություններ և վիճակագրական տվյալներ (ներառյալ՝ հայտարարված մրցույթների, տրված լիցենզիաների, հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) ցանցով հեռարձակման լիցենզավորման համար ներկայացված ու մերժված դիմումների և դրանց հիմնավորման, բացահայտված խախտումների և դրանց նկատմամբ կիրառված պատժամիջոցների և այլ լիազորությունների իրականացման մասին):

3. Հաղորդումը Ազգային ժողով է ներկայացնում Հանձնաժողովի նախագահը:

4. Հաղորդումն Ազգային ժողովում քննարկվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով:

5. Հանձնաժողովն իր հաղորդումը հրապարակում Հանձնաժողովի պաշտոնական կայքում:

6. Հանձնաժողովի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը հրապարակվում են Հանձնաժողովի պաշտոնական կայքում, բացառությամբ այն դեպքերի, երբ պարունակում են օրենքով պահպանվող գաղտնիք համարվող տեղեկատվություն:

Հոդված 44. Հանձնաժողովի գործունեության կարգը

1. Հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի և աշխատանքային քննարկումների միջոցով:

2. Հանձնաժողովի նիստերը հրավիրում է Հանձնաժողովի նախագահն՝ իր նախաձեռնությամբ կամ Հանձնաժողովի առնվազն երեք անդամի պահանջով:

3. Հանձնաժողովի նիստերը դռնբաց են՝բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկատվության վերաբերյալ հարցերի քննարկման դեպքում Հանձնաժողովի նիստին ներկա

անդամների ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ անցկացվում են դռնփակ:

4. Հանձնաժողովը զանգվածային լրատվության առնվազն մեկ միջոցով, ինչպես նաև իր կայքում հրապարակում է նիստերի անցկացման տեղը, ժամանակը և օրակարգը:

5. Հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը Հանձնաժողովի նիստին կարող է մասնակցել խորհրդակցական ձայնի իրավունքով :

6. Հանձնաժողովի նիստը վարում է Հանձնաժողովի նախագահը կամ նրան փոխարինող անձը: Նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է Հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

7. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

8. Հանձնաժողովի նիստում քննարկվող որևէ հարցի վերաբերյալ անձնական շահագրգռվածություն ունեցող Հանձնաժողովի անդամը պարտավոր է քննարկումից առաջ Հանձնաժողովի նախագահին և մյուս անդամներին տեղեկացնել իր շահագրգռվածության փաստի և բնույթի մասին, ինչը պետք է արձանագրվի նիստի արձանագրության մեջ:

9. Այդ տեղեկացումից հետո Հանձնաժողովի համապատասխան անդամը՝

1) պարտավոր է հրաժարվել տվյալ հարցի վերաբերյալ նիստին մասնակցելուց.

2) չպետք է հաշվառվի այդ նիստի իրավազորության ապահովման նպատակով:

10. Հանձնաժողովի նիստը հետաձգվում է՝

1) քվորում չլինելու.

2) աշխատանքային օրն ավարտվելու.

3) հարցի քննությունը տվյալ նիստում անհնարին դարձնող այլ բացառիկ հանգամանքների առկայության դեպքում:

11. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են Հանձնաժողովի աշխատակազմի կողմից: Նիստերի արձանագրությունները ստորագրում է նիստը

նախագահողը: Նիստի արձանագրությունը կամ դրա մի մասը Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ կարող է հրապարակվել: Հանձնաժողովի աշխատակազմը վարում է Հանձնաժողովի որոշումների գրանցամատյան:

12. Հանձնաժողովն ընդունում է աշխատակարգ, որով սահմանվում են Հանձնաժողովի գործառույթների և լիազորությունների իրականացման ընթացակարգերը:

Հոդված 45. Հանձնաժողովի աշխատակազմը

1. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է աշխատակազմի միջոցով:

2. Հանձնաժողովի աշխատակազմի վարձատրությունն իրականացվում է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

Հոդված 45.1. Հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկման իրականացման կարգը

1. Հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ կաբելային (մալուխային) հեռուստառադիոհեռարձակման դեպքում՝ նաև հեռուստառադիոընկերությունում տեղում դիտարկում իրականացնելու միջոցով: Ուղղակի դիտարկման արդյունքները կարող են համադրվել հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների ներկայացրած հաշվառման մատյանների տվյալների հետ:

2. Հանրային հեռուստաընկերության և հանրային ռադիոընկերության գործունեության մշտադիտարկումը ներառում է նաև տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վերաբերյալ ուսումնասիրությունը, որն իրականացվում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված եղանակներով:

3. Կաբելային (մալուխային) հեռուստառադիոհեռարձակման դեպքում հեռուստառադիոընկերություններում մշտադիտարկումն իրականացվում է Հանձնաժողովի նախագահի հրամանի հիման վրա:

4. Մշտադիտարկում իրականացնելու մասին հրամանում նշվում են՝

1) մշտադիտարկում իրականացնող մարմնի անվանումը,

2) հեռուստաընկերության կամ ռադիոընկերության լրիվ անվանումը և գտնվելու վայրը,

3) մշտադիտարկում իրականացնող անձի անունը, ազգանունը և պաշտոնը,

4) մշտադիտարկման նպատակը, ժամանակահատվածը և իրավական հիմքերը:

5. Հեռուստաընկերությունում կամ ռադոիրնկերությունում մշտադիտարկումը սկսելուց առաջ հրամանի մեկ օրինակը հանձնվում է հեռուստաընկերության կամ ռադիոընկերության ղեկավարին կամ նրան փոխարինող իրավասու այլ անձին:

6. Եթե հեռուստառադիոընկերության ղեկավարը կամ նրան փոխարինելու իրավունք ունեցող անձը չեն գտնվում հեռուստաընկերության կամ ռադիոընկերության գործունեության վայրում կամ հրաժարվում են ստանալ մշտադիտարկում իրականացնելու վերաբերյալ հրամանը և ստորագրությամբ հավաստել այն ստանալու փաստը, ապա հրամանի պատճենը 3-օրյա ժամկետում փոստային առաքման միջոցով ուղարկվում է հեռուստաընկերությանը կամ ռադիոընկերությանը, որը ստանալուց հետո միայն կարող է իրականացվել մշտադիտարկում: Անհապաղ մշտադիտարկում իրականացնելու անհրաժեշտության դեպքում մշտադիտարկում իրականացնելու վերաբերյալ հրամանի օրինակը և մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը փոստային առաքման միջոցով ուղարկվում են հեռուստաընկերությանը կամ ռադիոընկերությանը՝ մշտադիտարկումն իրականացնելուց հետո եռօրյա ժամկետում:

7. Հեռուստառադիոընկերությունում մշտադիտարկում իրականացնելու դեպքում հեռուստառադիոընկերությունը մշտադիտարկում իրականացնող անձանց պետք է ապահովի անհրաժեշտ աշխատանքային տարածքով և տեխնիկական միջոցներով:

8. Մշտադիտարկման արդյունքներով Հանձնաժողովի ներկայացուցչի կողմից կազմվում է մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրություն:

9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները: Դիտարկման արդյունքների և հաշվառման մատյանների տվյալների համադրման դեպքում մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են նաև դիտարկման արդյունքների և հաշվառման մատյանների տվյալների միջև անհամապատասխանությունը, անհամապատասխանությունների քանակը և տևողությունը:

10. Արձանագրությանը կցվում են մշտադիտարկման առարկային վերաբերող, իսկ հեռուստառադիոընկերությունում մշտադիտարկում իրականացնելու դեպքում՝ հեռուստառադիոընկերության տիրապետության տակ գտնվող ապացույցները, որի մասին նշում է կատարվում արձանագրության մեջ:

11. Մշտադիտարկման արդյունքների մասին արձանագրությունը ուղղակի դիտարկում իրականացնելու դեպքում ստորագրում է մշտադիտարկում իրականացրած անձը, իսկ հեռուստառադիոընկերությունում մշտադիտարկում իրականացնելու դեպքում՝ Հանձնաժողովի և հեռուստաընկերության կամ ռադիոընկերության ներկայացուցիչները:

12. Ուղղակի դիտարկման միջոցով իրականացված մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը այն կազմելուց հետո եռօրյա ժամկետում ուղարկվում է հեռուստաընկերությանը կամ ռադիոընկերությանը:

13. Մշտադիտարկման արդյունքների մասին արձանագրության վերաբերյալ առարկություններ ունենալու դեպքում հեռուստառադիոընկերությունը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը ստանալուց հետո եռօրյա ժամկետում կարող է դրանք ներկայացնել Հանձնաժողով:

14. Հեռուստառադիոընկերությունում իրականացված մշտադիտարկման արդյունքների մասին արձանագրության վերաբերյալ առարկություններ ունենալու դեպքում հեռուստաընկերության կամ ռադիոընկերության ներկայացուցիչն այդ մասին նշում է կատարում արձանագրության մեջ և ստորագրում:

15. Եթե հեռուստառադիոընկերության ղեկավարը կամ նրան փոխարինելու իրավունք ունեցող անձը հրաժարվում է ստորագրել և ստանալ արձանագրության երկրորդ օրինակը կամ չի գտնվում մշտադիտարկման իրականացման վայրում, ապա արձանագրության երկրորդ օրինակը փոստով առաքվում է հեռուստաընկերությանը կամ ռադիոընկերությանը:

16. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը հեռուստառադիոընկերության ղեկավարին փոխարինելու իրավունք ունեցող անձի կողմից ստորագրվելու դեպքում դրա մասին համապատասխան նշում է կատարվում արձանագրության մեջ, և արձանագրությանը կցվում է այն իրավական փաստաթղթի պատճենը (կանոնադրություն, հրաման, որոշում, լիազորագիր կամ այլ փաստաթուղթ), որի հիման վրա տվյալ անձն իրավունք ունի փոխարինել հեռուստաընկերության կամ ռադիոընկերության ղեկավարին:

17. Եթե հեռուստառադիոընկերության ներկայացուցիչը հրաժարվում է արձանագրությունը ստորագրել կամ այլ կերպ խոչընդոտում է մշտադիտարկման իրականացմանը, ապա Հանձնաժողովի ներկայացուցիչն այդ մասին նշում է կատարում արձանագրության մեջ, որում նշվում են նաև մշտադիտարկման իրականացմանը խոչընդոտած հեռուստաընկերության կամ ռադիոընկերության ներկայացուցչի անունը, ազգանունը և պաշտոնը:

18. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայել որպես վարչական վարույթի ապացույց:

19. Հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկման իրականացումն ապահովում է Հանձնաժողովի աշխատակազմը:

Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության ձևը հաստատում է Հանձնաժողովը:

Հոդված 47. Թվային հեռարձակման ցանցը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում հեռուստառադիոծրագրերի եթերային հեռարձակումն իրականացվում է թվային հեռարձակման ցանցի միջոցով:

2. Մինչև սույն օրենքի 62-րդ հոդվածի 13-րդ մասով սահմանված ժամկետում իրավաբանական անձանց կողմից թվային հեռարձակման մասնավոր ցանցերի ստեղծումը թվային հեռարձակման ցանցը Հայաստանի Հանրապետության սեփականությունն է:

3. Հայաստանի Հանրապետության սեփականություն համարվող թվային հեռարձակման ցանցի ստեղծումը, պահպանումն ու շահագործումն իրականացնող կազմակերպության հիմնադրումը և նրա գործառույթները սահմանվում են ~~Հայաստանի Հանրապետության կ~~Կառավարության որոշմամբ:

4. ~~Ազգային հ~~Հանձնաժողովը յուրաքանչյուր տասը տարին մեկ՝ սկսած 2010 թվականի հուլիսի 20-ից, հայտարարում է թվային հեռարձակման ցանցի միջոցով եթերային հեռարձակում իրականացնելու հեռուստահեռարձակողների մրցույթ՝ հանրապետական, մայրաքաղաքային և տարածքային սփռման սույն հոդվածով սահմանված թեմատիկ ուղղվածություն ունեցող և սույն հոդվածում նշված քանակությամբ հեռուստաընկերությունների համար:

2010 թվականի հուլիսի 20-ին հայտարարվող թվային հեռարձակման ցանցի միջոցով եթերային հեռարձակում իրականացնելու հեռուստահեռարձակողների առաջին մրցույթի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքի 62-րդ հոդվածով:

5. Թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռարձակում են իրականացնում հանրապետական սփռման հետևյալ թեմատիկ ուղղվածությամբ հեռուստաընկերությունները.

1) օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն սահմանված Հանրային հեռուստառադիոընկերության երկու հեռուստածրագրեր (հեռուստաալիքներ), որոնցից մեկը՝ ընդհանուր ուղղվածության, մյուսը՝ հոգևոր-մշակութային.

2) հինգ մասնավոր հեռուստաընկերություններ՝ ընդհանուր ուղղվածության.

3) մեկ վերահեռարձակող հեռուստաընկերություն:

6. Թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռարձակում են իրականացնում մայրաքաղաքային սփռման հետևյալ թեմատիկ ուղղվածությամբ հեռուստաընկերությունները.

1) մեկ մասնավոր հեռուստաընկերություն՝ ժամանցային ուղղվածության.

2) մեկ մասնավոր հեռուստաընկերություն՝ երիտասարդական ուղղվածության.

3) մեկ մասնավոր հեռուստաընկերություն՝ երաժշտական ուղղվածության.

4) մեկ մասնավոր հեռուստաընկերություն՝ մանկապատանեկան, գիտակրթական, դաստիարակչական, ճանաչողական ուղղվածության.

5) մեկ մասնավոր հեռուստաընկերություն՝ միջազգային և տեղական լրատվական-վերլուծական ուղղվածության.

6) չորս վերահեռարձակող հեռուստաընկերություններ:

7. Թվային հեռարձակման ցանցի միջոցով Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզում և Երևան քաղաքում հեռարձակում է իրականացնում ընդհանուր ուղղվածության ու տվյալ տարածքի բնակչության հետաքրքրությունները բավարարող մեկական տարածքային սփռման մասնավոր հեռուստաընկերություն:

8. Թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռարձակում են իրականացնում հանրապետական սփռման հետևյալ թեմատիկ ուղղվածությամբ ռադիոընկերությունները.

1) օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն սահմանված Հանրային հեռուստառադիոընկերության մեկ ռադիոծրագիր.

2) երեք մասնավոր ռադիոընկերություն՝ ընդհանուր ուղղվածության:

9. Թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռարձակում են իրականացնում մայրաքաղաքային սփռման հետևյալ թեմատիկ ուղղվածությամբ ռադիոընկերությունները.

1) օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն սահմանված Հանրային հեռուստառադիոընկերության երկու ռադիոծրագիր.

2) մեկ մասնավոր ռադիոընկերություն՝ ժամանցային ուղղվածության.

3) մեկ մասնավոր ռադիոընկերություն՝ երիտասարդական ուղղվածության.

4) մեկ մասնավոր ռադիոընկերություն՝ երաժշտական ուղղվածության.

5) տասը մասնավոր ռադիոընկերություն՝ ընդհանուր ուղղվածության:

10. Թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռարձակում են իրականացնում մարզային սփռման հետևյալ թեմատիկ ուղղվածությամբ ռադիոընկերությունները.

1) օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն սահմանված Հանրային հեռուստառադիոընկերության մեկ ռադիոծրագիր և ընդհանուր ուղղվածության երկու մասնավոր ռադիոընկերություն:

Հոդված 49. Լիցենզավորված անձի ընտրությունը

1. ~~Ազգային հ~~Հանձնաժողովը լիցենզավորված անձի ընտրության ժամանակ հաշվի է առնում՝

1) սեփական արտադրության հաղորդումների գերակայությունը.

2) հայրենական արտադրության հաղորդումների գերակայությունը.

3) հեռուստառադիոընկերության բիզնես ծրագրի հիմնավորվածությունը.

4) բազմակարծությունը խթանելու կարողությունը.

5) դիմողի տեխնիկական և ֆինանսական հնարավորությունները.

6) աշխատակազմի մասնագիտական պատրաստվածությունը:

2. Լիցենզավորման մրցույթի ժամանակ այլ հավասար պայմանների դեպքում նախապատվությունը տրվում է՝

1) գործող այն հեռուստառադիոընկերություններին, որոնք իրենց գործունեության ընթացքում օրենսդրության խախտումներ թույլ չեն տվել.

2) գործող այն հեռուստառադիոընկերություններին, որոնք հեռուստառադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման բնագավառում ունեն առնվազն երեք տարվա փորձ:

3. ~~Ազգային հ~~Հանձնաժողովը մրցույթում հաղթող ճանաչելու մասին որոշումը կայացնում է վարկանիշային քվեարկության արդյունքների հիման վրա: Ազգային հանձնաժողովի որոշումը պետք է լինի պատշաճ հիմնավորված և պատճառաբանված: ~~Ազգային հ~~Հանձնաժողովն ապահովում է իր որոշման հրապարակայնությունը: Վարկանիշային քվեարկության իրականացման ընթացակարգը սահմանվում է ~~Ազգային հ~~Հանձնաժողովի սահմանած մրցույթի անցկացման կարգով:

(49-րդ հոդվածը փոփ. 31.05.17 ՀՕ-87-Ն)

Հոդված 50. Կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա ստանալու դիմումը

1. Հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա ստանալու համար դիմողը պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ, կամ առձեռն՝ ստացականով, ~~Ազգային հ~~Հանձնաժողովին ներկայացնում է դիմում, որում նշվում են՝

1) դիմումատուի անվանումը և գտնվելու վայրը.

2) հեռուստառադիոծրագրերի թեմատիկ ուղղվածությունը.

3) սփռման տարածքը.

4) տեղեկություններ դիմումատուի՝ այլ հեռուստառադիոընկերությունների հիմնադիր և լիցենզավորված անձ կամ զանգվածային լրատվության այլ միջոցների հիմնադիր լինելու, ինչպես նաև դրանց արտադրությամբ և տարածմամբ զբաղվելու մասին.

5) վերահեռարձակվող հեռուստառադիոծրագրերի թիվը (եթե դիմումատուն նախատեսում է իրականացնել վերահեռարձակում).

6) իր կողմից շահագործվող կաբելային (մալուխային) ցանցով այլ հեռահաղորդակցական ծառայություններ մատուցելու մասին տեղեկություններ.

7) դիմումի ներկայացման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը:

2. Դիմումին կից ներկայացվում են դիմումատուի հիմնադիր փաստաթղթերի պատճենները, բիզնես ծրագիրը, տվյալներ օգտագործվելիք տեխնիկական միջոցների և սարքավորումների մասին, ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր, տեղեկություններ աշխատակազմի թվաքանակի, նրանց կրթության և մասնագիտական պատրաստվածության մասին, տեղեկանք դիմումում նշված սփռման տարածքում բնակարանների թվի մասին:

3. Դիմումին կից ներկայացված փաստաթղթերում սխալներ, ջնջումներ, քերվածքներ, վրիպակներ հայտնաբերելու դեպքում ~~Ազգային հ~~Հանձնաժողովը

դրանք ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, դիմողին պատշաճ կերպով տեղեկացնում է այդ մասին՝ դրանց շտկման նպատակով: Դիմողն իրավունք ունի սույն մասում նշված ծանուցումը ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, Ազգային հանձնաժողով ներկայացնել փաստաթղթերը՝ առանց սույն մասում նշված թերությունների:

4. Հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզավորման կարգը սահմանում է ~~Ազգային հ~~Հանձնաժողովը:

Հոդված 51. Դիմումի քննարկումը և որոշման ընդունումը

1. Հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա տալու համար ~~Ազգային հ~~Հանձնաժողովն իր նիստում քննարկում է դիմումը և որոշում է ընդունում այն մուտքագրելուց հետո՝ 60 օրվա ընթացքում:

2. Լիցենզիա տալու մասին որոշմամբ ~~Ազգային հ~~Հանձնաժողովը սահմանում է նաև սույն օրենքի 47-րդ հոդվածով նախատեսված այն հեռուստաընկերությունների հեռուստառադիոծրագրերը (բացառությամբ վերահեռարձակող հեռուստաընկերությունների), որոնք ենթակա են պարտադիր հեռարձակման հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա ստացած անձի կողմից:

3. Լիցենզիա չի տրվում, եթե՝

1) ներկայացված փաստաթղթերը թերի, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված են կամ չեն համապատասխանում սույն օրենքի և իրավական այլ ակտերի պահանջներին և սույն օրենքի 50-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ դիմողը չի վերացրել Ազգային հանձնաժողովի նշած թերությունները.

2) դիմողը, օրենքի համաձայն, իրավունք չունի զբաղվելու հեռուստառադիոծրագրերի հեռարձակմամբ.

3) բացակայում են հեռուստառադիոծրագրերի հեռարձակման տեխնիկական հնարավորությունները:

4. Լիցենզիա տալը մերժելու հիմքերի մասին դիմողին գրավոր տեղեկացնում են որոշման ընդունումից հետո՝ տասնօրյա ժամկետում: Լիցենզավորման մերժումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Հոդված 52. Հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա ստացած անձի գործունեությունը

1. Օրենքով սահմանված կարգով հեռուստառադիոհեռարձակում իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող ընկերությունների հեռուստառադիոծրագրերը հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա ստացած անձի կողմից կարող են վերահեռարձակվել միայն Ազգային հանձնաժողովի թույլտվության հիման վրա:

Թույլտվությունը տրվում է, կամ դիմումը մերժվում է վերահեռարձակում իրականացնելու համար ~~Ազգային հ~~Հանձնաժողովին դիմելուց հետո՝ 15-օրյա ժամկետում:

1.1. Ընտրությունների (հանրաքվեների) քվեարկության օրը և դրան նախորդող օրն արգելվում է կաբելային (մալուխային) հեռուստաընկերությունների կողմից վերահեռարձակել Հայաստանի Հանրապետությունում գործող վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների վերգետնյա եթերային այն ծրագրերը, որոնք պարունակում են քարոզչական նյութ՝ տեղեկատվական, խմբագրական, փաստավավերագրական, հեղինակային կամ այլ հաղորդումների տեսքով կամ որևէ այլ ձևով:

2. Հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա ստացած անձը սեփական արտադրության հեռուստառադիոհաղորդումներ կարող է արտադրել և հեռարձակել ~~Ազգային հ~~Հանձնաժողովի թույլտվության հիման վրա:

3. Սեփական արտադրության յուրաքանչյուր նոր հեռուստառադիոծրագրի հեռարձակման համար թույլտվություն ստանալու նպատակով լիցենզավորված անձը ~~Ազգային հ~~Հանձնաժողով է ներկայացնում սույն օրենքի 48-րդ հոդվածով սահմանված բովանդակությամբ դիմում և փաստաթղթեր:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դիմումը և փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ 20-օրյա ժամկետում, դրանց քննարկման արդյունքում ~~Ազգային հ~~Հանձնաժողովը տալիս է թույլտվություն սեփական արտադրության հեռուստառադիոծրագրի հեռարձակման համար կամ կայացնում է դիմումը մերժելու մասին որոշում:

Հոդված 54. Լիցենզիա տալը

1. Լիցենզավորման մրցույթում հաղթող ճանաչված, ինչպես նաև դիմումի հիման վրա լիցենզիայի իրավունք ստացած հեռուստառադիոընկերությունները լիցենզավորման մրցույթում հաղթող ճանաչվելու և դիմումի հիման վրա լիցենզիա տալու մասին ~~Ազգային հ~~Հանձնաժողովի որոշումները ստանալուց հետո՝ 20-օրյա ժամկետում, վճարում են հեռարձակում իրականացնելու համար «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափով պետական տուրք:

2. Սույն հոդվածով սահմանված պետական տուրքի վճարումից հետո՝ տասնօրյա ժամկետում, ~~Ազգային հ~~Հանձնաժողովը նշված անձանց տալիս է լիցենզիաներ:

3. Սույն հոդվածով սահմանված պետական տուրքը չվճարելը հիմք է մրցույթում հաղթող ճանաչելու և դիմումի հիման վրա լիցենզիա տալու մասին որոշումներն ~~Ազգային հ~~Հանձնաժողովի կողմից չեղյալ ճանաչվելու համար:

4. Մրցույթում հաղթող ճանաչելու մասին որոշումը սույն հոդվածով սահմանված հիմքով չեղյալ ճանաչվելու դեպքում ~~Ազգային հ~~Հանձնաժողովը հայտարարում է թվային հեռարձակման ցանցի միջոցով եթերային հեռարձակում իրականացնող համապատասխան սփռման և ուղղվածության հեռուստաընկերության և համապատասխան սփռման և ուղղվածության ռադիոընկերության լիցենզավորման արտահերթ մրցույթ և իրականացնում լիցենզավորում սույն օրենքով մրցույթի միջոցով իրականացվող լիցենզավորման համար սահմանված կարգով ու պայմաններով:

5. Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում սույն օրենքի 47-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով և 6-րդ մասի 6-րդ կետով նախատեսված հեռուստաընկերությունների վրա:

Հոդված 55.1. Ընդհանուր դրույթներ մասնավոր մուլտիպլեքսորի վերաբերյալ

1. Մասնավոր մուլտիպլեքսորի գործունեությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով ~~Ազգային~~ Հանձնաժողովի տված լիցենզիայի հիման վրա Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված իրավաբանական անձի կողմից, որի հիմնադրման (ստեղծման) ժամանակ կամ դրանից հետո օտարերկրյա կապիտալի մասնակցության բաժինը չպետք է հավասար կամ ավելի լինի հեռարձակող կազմակերպության որոշումների ընդունման համար անհրաժեշտ բաժնեմասերի 50 տոկոսից: Ավելի մեծ բաժնեմաս կարող է սահմանվել միջպետական պայմանագրերով:

2. Մասնավոր մուլտիպլեքսորը պարտավոր է մուլտիպլեքսն իրականացնել սեփական հեռարձակման թվային ցանցի միջոցով, որի սփռման տարածքը չպետք է լինի ավելի փոքր, քան Հայաստանի Հանրապետության հանրային հեռարձակման թվային ցանցի սփռման տարածքը:

3. Մասնավոր մուլտիպլեքսորի ցանցի բաղադրիչները (ներառյալ՝ ռադիոկայանները, մալուխները, հեռարձակող սարքավորումները) պետք է լինեն մասնավոր մուլտիպլեքսորի սեփականությունը:

4. Մասնավոր մուլտիպլեքսորն իրավունք չունի մատուցելու այլ ծառայություններ, քան այնպիսիները, որոնք բացառապես կապված են հեռարձակման թվային ցանցի գործունեության և շահագործման հետ:

5. Մասնավոր մուլտիպլեքսորը պարտավոր է իր մուլտիպլեքսի հեռուստառադիոծրագրերի 20 տոկոսը ~~Ազգային հ~~Հանձնաժողովի սահմանած ժամկետում, բայց ոչ շուտ, քան երեք ամսում տրամադրել Ազգային հանձնաժողովի կողմից լիցենզավորված հեռուստառադիոընկերություններին՝ հեռուստառադիոհեռարձակում իրականացնելու համար, իսկ մնացած հեռուստառադիոծրագրերը կարող է օգտագործել անձամբ կամ տրամադրել

վճարովի կամ անվճար հիմունքներով հեռուստառադիոընկերություններին, բացառապես սույն օրենքով նախատեսված կարգով վերահեռարձակում իրականացնելու նպատակով: Սույն հոդվածում նշված հեռուստածրագրերը ~~Ազգային հ~~Հանձնաժողովը տրամադրում է սույն օրենքի 48-49-րդ հոդվածներով սահմանված մրցույթ հայտարարելու միջոցով նոր լիցենզիա ստացած ընկերություններին:

Սույն հոդվածում նշված հեռուստառադիոծրագրերը չեն կարող տրամադրվել Հանրային հեռարձակման թվային ցանցում հեռարձակման իրավունք ունեցող հեռուստառադիոընկերությանը, բացառությամբ եթե այդ ընկերությունը հրաժարվում է Հանրային հեռարձակման թվային ցանցում հեռարձակման իրավունքից:

(55.1-ին հոդվածը փոփ. 27.10.17 ՀՕ-152-Ն)

Հոդված 55.2. Մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզիա ստանալու մրցույթը

1. Ազգային հանձնաժողովը մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզիա ստանալու առաջին մրցույթը հայտարարում է մինչև 2016 թվականի մայիսի 1-ը: Մրցույթը չկայանալու կամ մրցույթում հաղթող չլինելու դեպքում դրա հայտարարելուց մեկ տարի հետո ~~Ազգային հ~~Հանձնաժողովը հայտարարում է նոր մրցույթ:

2. Մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզիա ստանալու մրցույթը հայտարարելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, սույն օրենքի 55.1-ին հոդվածի պայմաններին համապատասխանող իրավաբանական անձը ~~Ազգային~~ Հհանձնաժողով պետք է ներկայացնի՝

ա) դիմում.

բ) հեռարձակման թվային ցանցի ստեղծման նախագիծը, ներառյալ՝ ցանցի գործարկման ժամանակացույցը.

գ) ապացույցներ դիմողի մոտ հեռարձակման թվային ցանցն ստեղծելու և շահագործելու համար անհրաժեշտ տեխնիկական և ֆինանսական կարողությունների առկայության մասին:

3. Մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզիայի համար դիմումում պետք է նշվեն՝

ա) դիմումն Ազգային հանձնաժողովին ուղղված լինելու մասին.

բ) դիմողի գրանցման համարը, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության իրականացման հասցեն.

գ) մասնավոր մուլտիպլեքսորի լիցենզիա ստանալու համար դիմումը ներկայացնելու մասին.

դ) մուլտիպլեքսի կառուցման և գործարկման համար անհրաժեշտ ռադիոհաճախականությունների մասին, ընդ որում, հաճախականությունները պետք է ներառված լինեն Ազգային հանձնաժողովի կառավարման ներքո տրամադրված հաճախականություններում:

4. Մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզավորման համար դիմումների ներկայացման ժամկետի ավարտից հետո ~~Ազգային հ~~Հանձնաժողովը ցանցի ստեղծման նախագիծը և ժամանակացույցը իր ընտրած փորձագետներին ներկայացնում է տեխնիկական փորձաքննության, որը պետք է իրականացվի առավելագույնը երեք ամսվա ընթացքում:

5. Եթե երեք ամսվա ընթացքում հանձնաժողովը չի տալիս տեխնիկական եզրակացությունը, ապա համարվում է, որ այն համապատասխանում է անհրաժեշտ պահանջներին:

6. Տեխնիկական փորձաքննության եզրակացությունն ստանալուց հետո՝ առավելագույնը 15-օրյա ժամկետում, ~~Ազգային հ~~Հանձնաժողովը կազմակերպում է հանրային լսումներ, որոնց անցկացման վայրի և ժամի մասին հայտարարություն է հրապարակում Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում (www.azdarar.am):

7. Տեխնիկական փորձաքննության եզրակացությունն ստանալուց հետո՝ առավելագույնը երկու ամսվա ընթացքում, հիմք ընդունելով փորձաքննության և հանրային լսումների արդյունքները, ~~Ազգային հ~~Հանձնաժողովը որոշում է ընդունում լիցենզիա տրամադրելու կամ դիմումը մերժելու վերաբերյալ:

8. Մրցույթի կազմակերպման առանձնահատկությունները (ներառյալ՝ գնահատման չափանիշները) սահմանվում են ~~Ազգային հ~~Հանձնաժողովի որոշմամբ:

9. ~~Ազգային հ~~Հանձնաժողովը մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզավորման մրցույթը հայտարարում է չկայացած, եթե՝

1) սահմանված ժամկետում ոչ մի դիմում չի ներկայացվել, կամ ներկայացված դիմումներից ոչ մեկը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին.

2) մրցույթի միակ մասնակցի կամ բոլոր մասնակիցների հեռարձակման թվային ցանցի ստեղծման նախագծի և ժամանակացույցի տեխնիկական փորձաքննության արդյունքում տրվել է բացասական եզրակացություն, ընդ որում այս դեպքում հանրային լսումներ չեն անցկացվում.

3) մրցույթի միակ մասնակցի կամ բոլոր մասնակիցների հեռարձակման թվային ցանցի ստեղծման նախագծով ներկայացված հեռարձակման ցանցի առաջարկվող սփռման տարածքի չափը չի համապատասխանում սույն օրենքի 55.1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջին:

(55.2-րդ հոդվածը փոփ., լրաց. 27.10.17 ՀՕ-152-Ն)

(գլուխը լրաց. 18.12.15 ՀՕ-202-Ն)

Հոդված 56. Առանց լիցենզավորման հեռուստառադիոհաղորդումների կազմակերպման պայմանները

1. Կաբելային (մալուխային) ցանցով հեռարձակման համար լիցենզիա չի պահանջվում, եթե սփռման և սպասարկման տարածքը սահմանափակվում է իրավաբանական անձին պատկանող շենքերով ու տարածքներով, բացառությամբ հյուրանոցների, հյուրանոցային համալիրների, հանգստյան տների և նմանատիպ վարձակալական հիմունքներով շենքերի:

2. Առանց լիցենզավորման հեռուստառադիոհաղորդումների կազմակերպումը չպետք է ազդի տվյալ շրջանում գործող հեռուստառադիոհաղորդումների իրականացման որակի վրա, ինչպես նաև չպետք է խաթարի հեռուստառադիոհաղորդումներ ընդունող և հեռարձակող հեռահաղորդակցության տեխնիկական միջոցների աշխատանքը:

3. Սույն հոդվածի 1-ին մասում նշված գործունեությունն այն հյուրանոցների, հյուրանոցային համալիրների, հանգստյան տների և նմանատիպ վարձակալական հիմունքներով շենքերի տարածքում, որտեղ առկա է ութ կամ ավել հեռուստացույց, կարող է իրականացվել միայն Ազգային հանձնաժողով ծանուցում ներկայացնելուց հետո:

4. Սույն օրենքի և հեռուստատեսության ու ռադիոյի բնագավառի այլ օրենքների ու իրավական ակտերի պահանջների խախտման դեպքում առանց լիցենզավորման հեռուստառադիոընկերությունների գործունեությունն ~~Ազգային~~ Հ~~հ~~անձնաժողովը դադարեցնում է:

(56-րդ հոդվածը խմբ.18.12.15 ՀՕ-202-Ն)

Հոդված 57. Հյուրանոցների, հյուրանոցային համալիրների, հանգստյան տների և նմանատիպ վարձակալական հիմունքներով շենքերի տարածքում հեռուստառադիոհաղորդումների վերահեռարձակման մասին ծանուցումը

(վերնագիրը խմբ.18.12.15 ՀՕ-202-Ն)

1. Սույն օրենքի 56-րդ հոդվածի 3-րդ մասում նշված ծանուցումը հեռուստառադիոհաղորդումներ հեռարձակողը պարտավոր ~~է Ազգային~~ ~~հ~~Հանձնաժողով ներկայացնել հեռուստառադիոհաղորդումների կազմակերպումից հինգ օր առաջ:

2. Ծանուցման մեջ պետք նշվեն այն բոլոր հեռուստաընկերությունների անվանումները, որոնք ծանուցում ներկայացնողը պատրաստվում է վերահեռարձակել, ինչպես նաև ներկայացվում են վերը նշված հեռուստառադիոընկերությունների իրավատերերի հետ կնքված պայմանագրերի լուսապատճենները:

3. Հյուրանոցների, հյուրանոցային համալիրների, հանգստյան տների և նմանատիպ վարձակալական հիմունքներով շենքերի տարածքում հեռուստառադիոհաղորդումների հեռարձակումն իրականացվում է սույն օրենքով սահմանված կարգով:

(57-րդ հոդվածը խմբ.18.12.15 ՀՕ-202-Ն)

Հոդված 58. Պատասխանատվությունը հեռուստատեսության և ռադիոյի օրենսդրության պահանջները խախտելու համար

1. ~~Ազգային հ~~Հանձնաժողովի կողմից հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների, լիցենզիայի պայմանների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումների կրկնակի դեպքեր հայտնաբերելու և դրանց մասին ~~Ազգային հ~~Հանձնաժողովին գրավոր տեղեկացնելու դեպքում Ազգային հանձնաժողովը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք:

2. ~~Ազգային հ~~Հանձնաժողովն իրավասու է սույն օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ կետերով սահմանված հիմքերի առկայության պարագայում դիմել դատարան՝ լիցենզիայի գործողության դադարեցման պահանջով, ինչպես նաև խախտում թույլ տված հեռուստառադիոընկերությանը (հեռուստաընկերությանը կամ ռադիոընկերությանը) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան այլ պատասխանատվության ենթարկելու պահանջով:

3. Հեռուստառադիոընկերությունները (հեռուստաընկերությունը կամ ռադիոընկերությունը) իրավունք ունեն դիմելու դատարան՝ ~~Ազգային~~ ~~հ~~Հանձնաժողովի որոշումներն անվավեր ճանաչելու կամ փոփոխելու պահանջով, ընդ որում՝ նշված պահանջով հայցը դատարան ներկայացնելը չի կասեցնում վարչական տույժի կիրառման մասին որոշման կատարումը:

Հոդված 59. Գրավոր նախազգուշացումը

1. Սույն օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հայտնաբերված խախտումների առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, ~~Ազգային~~ Հանձնաժողովն իրավախախտումը հայտնաբերելու օրվանից և (կամ) պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հայտնաբերված իրավախախտումների կրկնակի դեպքերի մասին տեղեկացվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում գրավոր նախազգուշացնում է խախտում կատարած հեռուստառադիոընկերությանը՝ պահանջելով վերացնել խախտումը և սահմանելով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ:

Հոդված 60. Տուգանքը

1. Սույն հոդվածով սահմանված իրավախախտումներ կատարած անձի նկատմամբ տուգանք կարող է կիրառվել իրավախախտում կատարելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող կամ տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում:

2. Սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով գրավոր նախազգուշացում ստացած անձի կողմից նախազգուշացմամբ նշված ժամկետում սահմանված պահանջը չկատարելը կամ նախազգուշացման համար հիմք դարձած նույն խախտումը սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

3. Հեռուստառադիոհեռարձակում իրականացնող հեռուստառադիոընկերության կողմից համապատասխան սփռման գոտիների համընկնման շրջաններում հեռուստառադիոլսարանի՝ այլ հեռուստառադիոծրագրեր ընդունելու իրավունքը սահմանափակելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

4. Հեռուստառադիոընկերության անվանումը, ազդականշն ու այլ ելքային տվյալներ միայն օտար լեզուներով (առանց հայերեն տարբերակի) օգտագործելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

5. Հեռուստառադիոընկերության կողմից հայրենական արտադրության հաղորդումները ընդհանուր եթերաժամի 55 տոկոսից պակաս հեռարձակելը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:

6. Առանց ~~Ազգային հ~~Հանձնաժողովին տեղեկացնելու վերահեռարձակում իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

7. Ընտրությունների և հանրաքվեների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ քարոզչության համար արգելված ժամանակահատվածում քարոզչական բնույթի հաղորդում հեռարձակելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

8. Ընտրությունների (հանրաքվեների) նախընտրական (հանրաքվեի նախապատրաստական) քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում հեռուստատեսությամբ առանց էկրանի վրա պարտադիր անընդմեջ «Նախընտրական (հանրաքվեի նախապատրաստական) քարոզչություն» լուսագրի քաղաքական կամ այլ քարոզչական հաղորդումներ սփռելը, իսկ ռադիոսփռման դեպքում՝ յուրաքանչյուր հաղորդման ընթացքում ոչ պակաս, քան 3 անգամ դրա մասին չհիշեցնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

8.1. Հեռուստառադիոընկերությունների կողմից թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նկատմամբ խտրականության դրսևորումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

8.2. Հեռուստառադիոընկերությամբ հեռարձակվող լրատվական հաղորդումներում թեկնածուների և ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների (հանրաքվեի քարոզչությանը մասնակցող կողմերի) նախընտրական (հանրաքվեի նախապատրաստական) քարոզչական միջոցառումների վերաբերյալ անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվություն չապահովելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

9. Հեռուստառադիոընկերության կողմից իր հեռարձակած հաղորդումների տեսագրությունները և ձայնագրությունները՝ հեռարձակման օրվանից սկսած մեկ ամիս ժամանակով չպահպանելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

10. Ռադիոհեռուստատեսային հաղորդման ընթացքում ավելի քան քսան րոպեն մեկ հաճախականությամբ կամ յուրաքանչյուր մեկ եթերային ժամի հաշվով տասնչորս րոպեից ավելի տևողությամբ գովազդ հեռարձակելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

11. Հեռուստառադիոընկերությունների կողմից թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) խմիչքների (բացառությամբ տեղական արտադրության կոնյակի) գովազդի հեռարձակումը 06:00-ից մինչև 22:30-ն ընկած ժամանակահատվածում, ծխախոտի և ծխախոտային արտադրության գովազդի հեռարձակումը, ինչպես նաև մանկապատանեկան հեռուստառադիոհաղորդումներում ծխախոտի կամ ծխախոտային արտադրության ապրանքատեսակների ուղղակի կամ անուղղակի օգտագործումը կամ ցուցադրումը առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

12. Պաշտոնական հաղորդագրությունների, լրատվական թողարկումների գովազդային ընդհատումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

13. Ռադիոընկերության կողմից եթերում օրական առնվազն երեք անգամ իր անվանումը չհայտարարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

14. Հեռուստառադիոընկերության կողմից իր հաղորդումների հեռարձակման ժամանակ անընդմեջ իր խորհրդանիշը չհեռարձակելը, բացառությամբ գովազդի հաղորդման ժամանակ՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

15. Էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումները և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների եթեր հեռարձակումը ժամը 24.00-ից մինչև 6.00-ն ընկած ժամանակահատվածից դուրս, բացառությամբ բաժանորդային հեռարձակման՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

16. Արբանյակային հեռարձակման մասին սույն օրենքով սահմանված ժամկետում Ազգային հանձնաժողովին գրավոր չտեղեկացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկի չափով:

17. Լիցենզավորված հեռուստառադիոընկերության կողմից առանց Ազգային հանձնաժողովի թույլտվության բաժանորդային հեռարձակում իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութհարյուրապատիկի չափով:

18. Հեռուստառադիոհաղորդումների հաշվառման մատյանի վարման սահմանված կարգի խախտումներ թույլ տալը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

19. Յուրաքանչյուր առանձին գովազդային հատուկ հաղորդման տևողությունը եթերային մեկ ժամվա ընթացքում հինգ րոպեն գերազանցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

20. Հեռուստառադիոընկերությունների կողմից այն ապրանքատեսակների և ծառայությունների գովազդի հեռարձակումը, որոնց գովազդն արգելված է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

21. Սույն հոդվածի 3-20-րդ մասերով սահմանված հիմքերով վարչական տույժի ենթարկված հեռուստառադիոընկերության կողմից մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

22. Առանց սույն օրենքի 56-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ծանուցման վերահեռարձակում իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

23. Սույն հոդվածի 22-րդ մասով սահմանված հիմքերով վարչական տույժի ենթարկված իրավաբանական անձի կողմից մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Հոդված 61. Լիցենզիայի գործողության դադարեցումը

1. Լիցենզիայի գործողությունը դադարեցվում է, եթե՝

1) լիցենզիա ստանալու համար ներկայացված փաստաթղթերում լիցենզիան տալու համար էական նշանակություն ունեցող կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվություն է հայտնաբերվել.

2) լիցենզավորված անձը սույն օրենքի 60-րդ հոդվածի 21-րդ մասով սահմանված հիմքով մեկ տարվա ընթացքում երեք անգամ ենթարկվել է վարչական տույժի (բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի), որից հետո նույն տարվա ընթացքում կատարել է սույն օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված որևէ վարչական տույժի նշանակման համար հիմք համարվող արարք.

3) լիցենզավորված անձը սույն օրենքի 60-րդ հոդվածի 21-րդ մասով սահմանված հիմքով սույն օրենքի 60-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերի համաձայն՝ մեկ տարվա ընթացքում մեկ անգամ ենթարկվել է վարչական տույժի, որից հետո նույն տարվա ընթացքում կատարել է սույն օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված որևէ վարչական տույժի նշանակման համար հիմք համարվող արարք.

4) հեռուստառադիոընկերության տեխնիկական միջոցները չեն համապատասխանում ընդունված ստանդարտներին, որի հետևանքով վտանգ է սպառնում մարդկանց առողջությանը, արգելքներ են ստեղծվում այլ հեռուստառադիոընկերությունների գործունեության համար, չի ապահովվում հեռուստառադիոհաղորդումների տեխնիկական որակը.

5) տեղի է ունեցել լիցենզիայի զիջում ֆիզիկական կամ իրավաբանական այլ անձանց.

6) լիցենզավորված անձն առանց որևէ հիմնավոր պատճառի 24 ժամ շարունակ չի ապահովել հեռուստահաղորդումների հեռարձակում.

7) լիցենզավորված անձը լիցենզիան ստանալու պահից վեց ամսվա ընթացքում չի հեռարձակել հեռուստառադիոհաղորդումներ.

8) այդ մասին կա լիցենզավորված անձի դիմումը.

9) խախտվել են օրենքի 22-րդ հոդվածի պահանջները.

10) ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելու ժամանակ ~~Հայաստանի~~ Հանրապետության ~~Ն~~նախագահին կամ նրա լիազորած անձին

պաշտոնական հայտարարություններ կատարելու համար եթերաժամանակ չի հատկացվել.

11) խախտվել է սույն օրենքի 62-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը.

12) լիցենզավորված անձը լուծարվել է:

2. Լիցենզիայի գործողությունը դադարեցվում է լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու միջոցով:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ կետերով նախատեսված հիմքերով լիցենզիայի գործողությունը դադարեցվում է դատական կարգով՝ ~~Ազգային հ~~Հանձնաժողովի դիմումի համաձայն: Դիմում կարող է ներկայացվել խախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում, իսկ շարունակվող և տևական խախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից մեկ տարվա ընթացքում, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դեպքերում՝ կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվությունը հայտնաբերելու օրվանից 15-օրյա ժամկետում:

4. Սույն հոդվածի 1-ին մասի 8-րդ և 12-րդ կետերով նախատեսված հիմքերով լիցենզիայի գործողությունը դադարեցվում է ~~Ազգային հ~~Հանձնաժողովի որոշմամբ:

5. Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման ընթացքում կատարված տեխնիկական կանոնների խախտման, թերացումների կամ հաղորդումների հեռարձակումը չապահովելու համար լիցենզավորված անձն ազատվում է պատասխանատվությունից, եթե հիմնավորվում է, որ դրանք թույլ են տրվել՝

1) պետական լիազորված մարմինների կողմից տեխնիկական կանոնների կամ չափորոշիչների փոփոխության պատճառով.

2) տեխնիկական վերազինման նպատակով, որի մասին դրա իրականացումից առնվազն 30 օր առաջ գրավոր հիմնավորմամբ լիցենզավորված անձը տեղյակ է պահել Ազգային հանձնաժողովին և ստացել թույլտվություն.

3) վթարի կամ աղետների հետևանքով:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերում հեռուստառադիոընկերությունները ողջամիտ ժամկետում վերականգնում են հեռուստառադիոհաղորդումների հեռարձակումը՝ պահպանելով և ապահովելով լիցենզիայի պայմանները:

7. Սույն հոդվածով սահմանված հիմքերով եթերային հեռարձակում իրականացնելու լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու պահից երեք ամիս հետո ~~Ազգային~~ ԱզՀհանձնաժողովը հայտարարում է թվային հեռարձակման ցանցի միջոցով եթերային հեռարձակում իրականացնող համապատասխան սփռման և ուղղվածության հեռուստառադիոընկերության լիցենզավորման արտահերթ մրցույթ և իրականացնում լիցենզավորում սույն օրենքով մրցույթի միջոցով իրականացվող լիցենզավորման համար սահմանված կարգով ու պայմաններով, ընդ որում՝ որպես լիցենզավորված նոր հեռուստառադիոընկերության լիցենզիայի գործողության ժամկետ սահմանվում է այն ամսաթիվը, որը նշված էր ուժը կորցրած ճանաչված լիցենզիայում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2001 թվականի սեպտեմբերի 25-ին

ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գ Լ Ո Ւ Խ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի խնդիրները և գործողության ոլորտը

1. Սույն օրենքը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին (այսուհետ՝ Օրենսգիրք) համապատասխան սահմանում է բաժնետիրական ընկերությունների իրավական վիճակը, նրանց ստեղծման, գործունեության իրականացման և դադարեցման կարգը, բաժնետերերի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև ապահովում է բաժնետերերի, պարտատերերի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

2. Սույն օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետությունում ստեղծված կամ ստեղծվող բաժնետիրական ընկերությունների վրա:

3. Բաժնետիրական ընկերությունների գործունեությունը կարգավորվում է Օրենսգրքով, սույն օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով:

4. Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային, ապահովագրական, հանրային հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների և այլ գործունեության բնագավառներում բաժնետիրական ընկերությունների ստեղծման, վերակազմակերպման և լուծարման կարգի և իրավական վիճակի առանձնահատկությունները սահմանվում են այլ օրենքներով և իրավական ակտերով:

4.1. Սույն օրենքի դրույթները տարածվում են ներդրումային ֆոնդերի հետ կապված հարաբերությունների վրա, եթե այլ կարգավորում նախատեսված չէ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

4.2. Սույն օրենքի դրույթները տարածվում են հանրային հեռուստաընկերությունների և հանրային ռադիոընկերությունների վրա, եթե այլ կարգավորում նախատեսված չէ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

5. Մասնավորեցման նպատակով պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերով բաժնետիրական ընկերությունների վերակազմակերպման, ընկերությունների ստեղծման, լրացուցիչ բաժնետոմսերի, պարտատոմսերի թողարկման առանձնահատկությունները սահմանվում են

մասնավորեցումը (ապապետականացումը) կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով:

6. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանվում են բաժնետիրական ընկերությունների գործունեությունը կարգավորող այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են պայմանագրերի նորմերը:

7. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **անվանատեր՝** «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 197-րդ հոդվածի 1-ին մասում նշված իրավասու անվանատեր: Սույն օրենքում այլ բան նախատեսված չլինելու դեպքում անվանատեր հասկացությունը ներառում է հայաստանյան անվանատերերին և օտարերկրյա անվանատերերին.

2) **հայաստանյան անվանատեր՝** «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 197-րդ հոդվածի 3-րդ մասում նշված հայաստանյան պահառու (անվանատեր).

3) **օտարերկրյա անվանատեր՝** «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 197-րդ հոդվածի 3-րդ մասում նշված օտարերկրյա պահառու (անվանատեր).

4) **ռեեստրավար՝** սույն օրենքի 51-րդ հոդվածին համապատասխան՝ Ընկերության բաժնետերերի (անվանատերերի) ռեեստրի վարումն իրականացնող անձ:

(1-ին հոդվածը փոփ., լրաց. 29.05.02 ՀՕ-366-Ն, լրաց. 22.12.10 ՀՕ-273-Ն, 21.12.15 ՀՕ-24-Ն)

Հոդված 12. Ընկերության բաժնետերերի հիմնադիր ժողովը

1. Ընկերության բաժնետերերի հիմնադիր ժողովը (այսուհետ՝ հիմնադիր ժողով) գումարվում է բաժնետոմսերի տեղաբաշխումը և բաժնետոմսերի դիմաց բաժնետերերի կողմից վճարումները կատարելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում:

2. Հիմնադիր ժողովն իրավազոր է, եթե դրան մասնակցում են տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատերերի ձայների, ինչպես նաև բաժնետերերի 3/4-ը:

3. Հիմնադիր ժողովը՝

ա) հաստատում է բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները.

բ) ընդունում է որոշում Ընկերության հիմնադրման մասին.

գ) հաստատում է Ընկերության կանոնադրական կապիտալի (այսուհետ՝ կանոնադրական կապիտալ) չափը.

դ) հաստատում է Ընկերության կանոնադրությունը.

ե) ընտրում է Ընկերության խորհուրդ.

զ) ընտրում է Ընկերության վերստուգող հանձնաժողով (վերստուգող).

է) ձևավորում է գործադիր մարմին կամ նշանակում է գործադիր մարմնի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար.

ը) լսում է հիմնադիրների և (կամ) նրանց կողմից լիազորված անձի հաշվետվությունը: Սույն կետի «ա», «գ» և «ը» ենթակետերով սահմանված հարցերով որոշումներն ընդունվում են հիմնադիր ժողովի մասնակիցների ձայների 3/4-ով: Սույն կետի «բ» և «դ» ենթակետերով սահմանված հարցերով որոշումներն

ընդունվում են հիմնադիր ժողովի մասնակիցների միաձայնությամբ: Մնացած հարցերով որոշումներն ընդունվում են ժողովի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Հիմնադիր ժողովն իրավունք ունի քննարկել և որոշումներ ընդունել նաև այն հարցերի վերաբերյալ, որոնք Ընկերության կանոնադրությամբ վերապահված են ժողովի իրավասությանը:

4. Մեկ անձի կողմից Ընկերության հիմնադրման դեպքում հիմնադրի գրավոր որոշումը պետք է պարունակի դրույթներ՝ սույն հոդվածի 3-րդ կետի «ա-է» ենթակետերով սահմանված հարցերի վերաբերյալ:

5. Հայաստանի Հանրապետությանը պատկանող բաժնետոմսերով ընկերությունների հիմնադրման մասին Կառավարության որոշումը պետք է պարունակի դրույթներ Ընկերության հիմնադրման, ինչպես նաև հիմնադրի անունից հանդես եկող պետական կառավարման մարմնի (մարմինների) և նրանցից յուրաքանչյուրի կառավարմանը հանձնված բաժնետոմսերի փաթեթի մասին: Սույն հոդվածի 3-րդ կետով սահմանված մյուս լիազորությունները Կառավարության կողմից կարող են վերապահվել համապատասխան պետական կառավարման մարմնին (մարմիններին), ինչպես նաև, որպես պատվիրակված լիազորություն, համայնքի ղեկավարին, այսուհետ՝ լիազորված մարմնին~~լիազորված պետական մարմնին~~:

6. Համայնքին պատկանող բաժնետոմսերով Ընկերության հիմնադրման մասին համայնքի ղեկավարի որոշումը պետք է պարունակի դրույթներ՝ սույն հոդվածի 3-րդ կետի «ա-է» ենթակետերով սահմանված հարցերի վերաբերյալ:

8. Վերակազմակերպման (միաձուլում, բաժանում, առանձնացում, վերակազմավորում) արդյունքում ստեղծվող Ընկերության ժողովն իրավազոր է, եթե դրան մասնակցում են փոխարկման արդյունքում տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 50-ից ավելի տոկոսին տիրապետող բաժնետերեր:

Վերակազմակերպման (միաձուլում, բաժանում, առանձնացում, վերակազմավորում) արդյունքում ստեղծված Ընկերության հիմնադիր ժողովում սույն հոդվածի 3-րդ կետի «բ» և «ը» ենթակետերով սահմանված որոշումները կարող են չընդունվել:

Սույն հոդվածի 3-րդ կետի «ա», «գ» և «դ» ենթակետերով սահմանված հարցերով որոշումներն ընդունվում են հիմնադիր ժողովի մասնակիցների ձայների 3/4-ով:

(12-րդ հոդվածը փոփ. 09.04.07 ՀՕ-167-Ն, լրաց. 26.12.08 ՀՕ-40-Ն, 19.05.09 ՀՕ-119-Ն)

Հոդված 18. Ընկերության վերակազմակերպումը

1. Ընկերության վերակազմակերպումը (միաձուլումը, միացումը, բաժանումը, առանձնացումը, վերակազմավորումը) կատարվում է ժողովի որոշմամբ:

2. Օրենքով նախատեսված դեպքերում Ընկերության բաժանման կամ նրա կազմից մեկ կամ մի քանի իրավաբանական անձանց առանձնացման ձևով Ընկերության վերակազմակերպումն իրականացվում է դատարանի վճռով: Օրենքով նախատեսված դեպքերում Ընկերության միաձուլման կամ միացման ձևով

վերակազմակերպումը կարող է իրականացվել միայն լիազորված մարմնի ~~լիազորված պետական մարմնի~~ թույլտվությամբ:

3. Ընկերությունը, բացառությամբ միացման ձևով վերակազմակերպման դեպքի, վերակազմակերպված է համարվում նոր ստեղծված իրավաբանական անձանց պետական գրանցման պահից:

Ընկերությունն այլ Ընկերության հետ միացման ձևով վերակազմակերպվելիս վերակազմակերպված են համարվում՝ միացող Ընկերության գործունեությունը դադարելու վերաբերյալ պետական գրանցման պահից:

4. Ընկերության վերակազմակերպման մասին որոշումն ընդունելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Ընկերությունը պարտավոր է այդ մասին գրավոր ծանուցել իր բոլոր պարտատերերին: Ծանուցումը պետք է պարունակի տեղեկություններ՝ վերակազմակերպման մասին որոշումն ընդունելու տարվա, ամսվա, ամսաթվի, վերակազմակերպման ձևի և մասնակիցների, ինչպես նաև Ընկերության պարտավորությունների իրավահաջորդության մասին:

5. Վերակազմակերպվող Ընկերության պարտատերն իրավունք ունի Ընկերությունից պահանջել պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ, պարտավորությունների դադարեցում կամ վաղաժամկետ կատարում, ինչպես նաև վնասների հատուցում գրավոր ծանուցմամբ հետևյալ ժամկետներում՝

ա) միաձուլման, միացման կամ վերակազմավորման ձևով վերակազմակերպման մասին ծանուցման պահից՝ 30 օրվա ընթացքում.

բ) բաժանման կամ առանձնացման ձևով վերակազմակերպման մասին ծանուցման պահից՝ 60 օրվա ընթացքում:

Հոդված 43. Ընկերության հիմնադրամները և զուտ ակտիվները

1. Ընկերությունում ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ կանոնադրությամբ սահմանված չափով, բայց ոչ պակաս կանոնադրական կապիտալի 15 տոկոսից: Եթե պահուստային հիմնադրամը կազմում է կանոնադրությամբ սահմանված չափից ավելի փոքր մեծություն, ապա հատկացումներն այդ հիմնադրամին կատարվում են շահույթից՝ առնվազն հինգ տոկոսի չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից:

Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

2. Օրենքով կամ կանոնադրությամբ կարող են նախատեսվել նաև այլ հիմնադրամներ:

3. Ընկերության զուտ ակտիվների արժեքը գնահատվում է հաշվապահական հաշվեկշռի կամ աուդիտորական վերստուգման տվյալներով՝ օրենքով և այլ

իրավական ակտերով սահմանված կարգով: Եթե երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվի, որ Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից, ապա Ընկերությունը պարտավոր է հայտարարել և սահմանված կարգով գրանցել իր կանոնադրական կապիտալի նվազումը:

Եթե երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվի, որ Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է օրենքով սահմանված կանոնադրական կապիտալի նվազագույն չափից, ապա Ընկերությունը պարտավոր է ընդունել որոշում լուծարման մասին:

4. Եթե սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքերում կանոնադրական կապիտալի նվազեցման կամ Ընկերության լուծարման մասին որոշումը չի ընդունվել, ապա Ընկերության բաժնետերերը, պարտատերերը, ինչպես նաև լիազորված մարմիններն ~~լիազորված պետական մարմիններն~~ իրավունք ունեն պահանջել Ընկերության լուծարում՝ դատական կարգով:

Հոդված 68. Ժողովի որոշումները

1. Բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի, ժողովում ձայնի իրավունքից օգտվում են՝

ա) Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը.

բ) Ընկերության արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ սույն օրենքով և կանոնադրությամբ սահմանված դեպքերում:

Ձայնի իրավունք տվող (քվեարկող) բաժնետոմս է համարվում այն հասարակ (սովորական) կամ արտոնյալ բաժնետոմսը, որն իր սեփականատիրոջը տալիս է քվեարկվող հարցի վերաբերյալ քվեարկությանը մասնակցելու իրավունք: Եթե արտոնյալ բաժնետոմսն իր սեփականատիրոջը տալիս է մեկ ձայնից ավելի ձայնի իրավունք, ապա քվեարկող բաժնետոմսերի քանակի հաշվարկման ժամանակ նշված արտոնյալ բաժնետոմսերի տրված յուրաքանչյուր ձայն հաշվառվում է որպես առանձին քվեարկող բաժնետոմս:

2. Ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե սույն օրենքով կամ Ընկերության կանոնադրությամբ ձայների ավելի շատ քանակ սահմանված չէ:

3. Սույն օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «բ», «ժգ», «ժզ», «ժէ-ի» ենթակետերում թվարկված հարցերով որոշումներն ընդունում է ժողովը՝ միայն խորհրդի ներկայացմամբ, եթե սույն օրենքով և կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

4. Սույն օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «ա», «բ», «դ», «զ» և «ժթ» ենթակետերում թվարկված հարցերով որոշումներն ընդունում է ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ:

5. Սույն օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «գ» և «ը» ենթակետերում սահմանված հարցերով որոշումներն ընդունում է ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս

քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից, եթե Ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ:

6. Եթե Ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր կամ անվանատեր է հանդիսանում միայն մեկ անձ, ապա ժողովի որոշումները կարող են ընդունվել այդ անձի գրավոր որոշմամբ: Բաժնետեր իրավաբանական անձի որոշումը պետք է ընդունվի վերջինիս կանոնադրությամբ նման լիազորություններ ունեցող մարմնի կողմից:

7. Սույն օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «բ», «գ» և «ը» ենթակետերում սահմանված հարցերով պետությանը պատկանող բաժնետոմսերով Ընկերությունների ընդհանուր ժողովներում լիազորված մարմինը ~~լիազորված պետական մարմինը~~ (մարմինները) կամ վերջիններիս կողմից լիազորված անձը (անձինք) մասնակցում են որոշումների ընդունմանը՝ միայն Կառավարության համապատասխան որոշման առկայության դեպքում:

8. Սույն օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «բ», «գ» և «ը» ենթակետերում սահմանված հարցերով համայնքին պատկանող բաժնետոմսերով Ընկերությունների ընդհանուր ժողովներում համայնքի ղեկավարը կամ վերջինիս կողմից լիազորված անձը մասնակցում է որոշումների ընդունմանը՝ միայն համայնքի ղեկավարի (ավագանու համաձայնությամբ) համապատասխան որոշման առկայության դեպքում:

9. Ժողովի վարման կարգի մասին որոշումներ ընդունելու կարգը սահմանվում է կանոնադրությամբ կամ ժողովի հաստատած ներքին փաստաթղթերով:

10. Ժողովն իրավունք չունի փոփոխել օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ:

11. Ժողովի ընդունած որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները պետք է ներկայացվեն Ընկերության բաժնետերերին սույն օրենքով և Կանոնադրությամբ սահմանված կարգով և ժամկետներում՝ այդ որոշումներն ընդունելու պահից՝ 45 օրվա ընթացքում:

12. Եթե ժողովի որոշումն ընդունվել է Ընկերության՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի բոլոր սեփականատերերի կամ միաձայնությամբ, ապա սույն օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ կետով, 68-րդ հոդվածի 10-րդ կետով, 69-րդ հոդվածի 4-րդ կետով, 70-րդ հոդվածի 2-6-րդ կետերով, 71-րդ հոդվածով, 73-րդ հոդվածով, 74-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ-չորրորդ մասերով, 2-րդ կետով և 4-րդ կետի առաջին մասով, 75-րդ հոդվածով և 79-81-րդ հոդվածներով սահմանված պահանջները չպահպանելը չի կարող հիմք հանդիսանալ այդ հիմքերով որոշումներն անվավեր ճանաչելու համար:

13. Բաժնետերն իրավունք ունի դատական կարգով բողոքարկել սույն օրենքի, այլ իրավական ակտերի և կանոնադրության պահանջների խախտմամբ ժողովի ընդունած որոշումը: Դատարանն իրավունք ունի ուժի մեջ թողնել ժողովի որոշումը, եթե այդ բաժնետիրոջ քվեարկության մասնակցելը չէր կարող ազդել քվեարկության արդյունքների վրա և թույլ տված խախտումներն էական չեն:

(68-րդ հոդվածը լրաց. 22.12.10 ՀՕ-273-Ն, փոփ. 21.12.15 ՀՕ-24-Ն)